Ամուսնալուծության և ծնողի լքման հետևանքները վաղուց են գտնվում գիտական ուսումնասիրությունների կենտրոնում: Ջոն Բոուլբին իր «Attachment and Loss» աշխատության մեջ ցույց է տալիս, որ ծնողի երկարատև բացակայությունը վաղ մանկության շրջանում կարող է ունենալ հեռահար ազդեցություն մարդու բնավորության և հոգեկան առողջության վրա: Նրա մոտեցմամբ ծնողի հեռանալը երեխայի համար համարժեք է կորուստի և հաճախ ուղեկցվում է անապահով կապի ձևավորմամբ:

Ջուդիթ Ուոլերսթեյնի երկարատև՝ 25 տարվա լոնգիտուդ հետազոտությունները փաստում են, որ ամուսնալուծությունը մեկանգամյա իրադարձություն չէ, այլ երկարատև գործընթաց, որը վերաձևում է երեխայի հուզական զարգացումը և ազդում նրա հարաբերությունների մոդելների վրա ողջ կյանքի ընթացքում:

Մեկ ծնողի կողմից լքված ընտանիքների սոցիալ -հոգեբանական և իրավական վերլուծությունները

Հոդվածում քննարկվում է լքված ընտանիքների ուսումնասիրման երկու առանցքային հարց՝ դիտարկված մեկ հարթության մեջ.

1. Սոցիալ հոգեբանական՝ որոնք վերաբերվում են ընտանիքի անդամների փոխհարաբերություններին, ներընտանեկան կոնֆլիկտներին և ընտանիքի անդամների հոգևիճակին:
2. Իրավական կարգավորումներին՝ ընտանիքին լքած ծնողի անպատժելիության վերացում, լքված ընտանիքի ծնողի պատասխանատվության բարձրացում:

1. Լքված ընտանիքի սոցիալ-հոգեբանական խնդիրների վերլուծություն

Ուսումնասիրելով հարցի քննարկման սոցիալ-հոգեբանական և իրավական կողմերը, կատարվել են դիտարկումներ ՀՀ ԿԴԻ ունեցող 270 ընտանիքներում: Հետազոտությունները կատարվել են սկսած 2023թվականից: ՀՀ օրենսդրությամբ սահմանված է «Կյանքի դժվարին իրավիճակ» հասկացողությունը: Այն է՝

« հաշմանդամության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, երկարատև գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերից վերադառնալու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող»։ Ուսումնասիրվող ընտանիքներն առանձնացվել են ըստ սոցիալական խմբերի՝ 1)բազմազավակ ընտանիք, 2)ընտանիքում հիվանդ անդամ, 3)միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխա, 4)ամուսնալուծված ընտանիք։ Նկատվում է, որ ընտանիքների 63% ը ԿԴ իրավիճակում է հայտնվել մեկ ծնողի բացակայության արդյունքում։ Այդպիսի ընտանիքների անդամների մոտ (այդ թվում երեխաների) նկատելի են՝

- դեպրեսիա
- վարքային խանգարումներ
- վստահության անկում
- ինքնազնահատականի անկում
- սոցիալական մեկուսացում:

Սոցիոլոգ Էնդրյու Չերլինը ամուսնալուծությունը դիտարկում է որպես հասարակական ինստիտուցիոնալ երևույթ՝ ընդգծելով, որ գուզրնկերային հարաբերությունների բարձր անկայունությունը ստեղծում է անապահովություն ոչ միայն մեծահասակների, այլ հատկապես երեխաների համար։ Այս մոտեցումը թույլ է տալիս ամուսնալուծությունը դիտարկել ոչ թե որպես անհատական կյանքի ձախողում, այլ որպես սոցիալական համակարգի խնդիր։

Ամուսնալուծված ընտանիքները դիտարկելով որպես սոցիալական համակարգի խնդիր՝ ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ամուսնալուծությունները կապ չունեն ոչ երեխաների թվաքանակի, ոչ համատեղ ապրած ժամանակահատվածի հետ։ Ամուսնալուծված ընտանիքներում յուրաքանչյուր երրորդ ընտանիք լքված է մեկ ծնողի կողմից, չստանալով նրանից ոչ սոցիալ-հոգեբանական, ոչ՝ ֆինանսական աջակցություն։ Լքված ընտանիքների աճի քանակը կապված է ընտանիքի անդամների

փոխհարաբերությունների հետ, ընդհուպ մինչև գծություններ, թշնամական վերաբերմունք: Այս դեպքերում երեխաները, հատկապես անչափահասները, մասնակից դառնալով ընտանեկան ամենօրյա վեճերին, հենց բուն ընտանիքում դառնում են լքված, անտեսված: Շարունակաբար փնտրում են ընտանեկան վիճակի վատթարացման մեղավորներ: Մինչև ամուսնալուծվելը արդեն լքված երեխան, ծնողներից մեկի հեռանալուց հետո դառնում է վերջնականապես լքված: Այսինքն, մինչև ընտանիքի լքվելը՝ մինչև հեռանալը, երեխաների մեկուսացումը որպես նախասկիզբ արդեն գոյացած փաստ է: Լքված ընտանիքի ծնողը հիմնականում գտնվում է ծանր հոգեբանական ճնշման ազդեցության տակ, չկարողանալով օբյեկտիվ գնահատել իր և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունները: Նրանք ունեն չհասկացվածության բարդույթ, որն իր ազդեցությունն է թողնում նաև ընտանիքի մյուս անդամների՝ երեխաների վրա: Լքված ընտանիքի խնդիրները դառնում են առավել դժվարին, երբ ծնողներից մեկը հեռանում է, մյուսին թողնելով նաև ընտանիքում հիվանդ երեխայի հոգսը: Բազմաթիվ նման ծնողներ հայտնվում են անելանելի վիճակում, ողջ օրը միայնակ հոգալով հիվանդ երեխայի հոգսերը, չունենալով անգամ աշխատելու հնարավորություն: Նրանք ստիպված են լինում բավարարվել ստացած սոցիալական օգնություններով, ինչն էլ հաճախ բերում է ընտանիքում ապրող բոլոր երեխաների սոցիալ-հոգեբանական բարդ խնդիրների:

Վերոնշյալ համակարգային ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ զարգացած երկրներում ամուսնալուծությունների թիվը զգալիորեն զիջում է զարգացող և թույլ զարգացած երկրների թվին (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

1000 բնակչի հաշվով կատարված ուսումնասիրությունները.

	Երկիր	2014	2024	2025(01.06 դրությամբ)
1	Հայաստան	1	1.5	1.6
2	Վրաստան	2.8	3.7	3.7
3	Ռուսաստան	4.7	3.9	3.8-3.9
4	Եվրամիության միջին	2.1	2.0	2.0

Ուսումնասիրելով ՀՀ ում ընտանիքների ամուսնալուծությունների և ընտանիքների լքման նախապայմանները, պարզ է դառնում, որ տվյալ երևույթը ձևավորվում է մի շարք փոխկապակցված գործոնների ազդեցությամբ՝ հոգեբանական, սոցիալական, տնտեսական և համակարգային:

Նախ՝ հոգեբանական տեսանկյունից, ամուսնալուծությունները հաճախ պայմանավորված են հաղորդակցության խաթարմամբ, երկարատև չլուծված կոնֆլիկտներով և հուզական հեռացմամբ: Գործմանի հետազոտություններով հաստատված է, որ հարաբերություններում՝

- քրոնիկ քննադատությունը,
- պաշտպանողական վարքը,
- փոխադարձ արհամարհանքը,
- լռությունը, բարձր հավանականությամբ հանգեցնում են ամուսնության քայքայման: Գործմանի կարծիքով ամուսնալուծության հիմնական պատճառը ոչ թե կոնֆլիկտների քանակն է, այլ հուզական կապի քայքայումը և դրական փոխազդեցության նվազումը:

Գալով լքած ընտանիքների ամուսնության խնդրին և ուսումնասիրելով Հայաստանում ամուսնալուծությունների թվի աճը՝ պարզվում է, որ Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրում այս գործոնները հաճախ ուղեկցվում են հոգեբանական աջակցության սահմանափակ հասանելիությամբ, ինչի արդյունքում խնդիրները ժամանակին չեն վերամշակվում:

Տնտեսական գործոնները ևս ունեն առանցքային դեր: Անկայուն զբաղվածությունը, ցածր եկամուտները, վարկային ծանրաբեռնվածությունը և բնակարանային խնդիրները ստեղծում են մշտական սթրես, որը թուլացնում է ընտանեկան փոխհարաբերությունները: Տնտեսագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆինանսական անապահովությունը ոչ միայն խորացնում է կոնֆլիկտները, այլ նաև նվազեցնում է ընտանիքի պահպանման ռեսուրսները: Հայաստանի դեպքում այս գործոնը սրվում է սոցիալական պաշտպանության մեխանիզմների սահմանափակությամբ: Սոցիոլոգիական դիտանկյունից ամուսնալուծությունների աճը կապված է նաև ամուսնության ինստիտուտի փոփոխության հետ: Ժամանակակից Հայաստանում ամուսնությունը աստիճանաբար կորցնում է իր նախկին սոցիալական

պարտադիր բնույթը և ավելի շատ ընկալվում է որպես հուզական և անձնական ինքնաիրացման դաշտ: Այս պայմաններում հարաբերությունների խզումը դառնում է ավելի ընդունելի, սակայն դրա հետևանքների կառավարման համակարգը մնում է թերի զարգացած:

Հատկապես կարևոր է համակարգային գործոնի ազդեցությունը: Հայաստանի իրավական և սոցիալական միջավայրում ծնողի լքումը չի ուղեկցվում բավարար վերահսկողությամբ և պարտադիր աջակցությամբ: Ալիմենտի չվճարումը, ծնողական պարտականություններից փաստացի խուսափումը և ընտանիքի սոցիալական մեկուսացումը հաճախ չեն բերում արագ և արդյունավետ միջամտության: Արդյունքում ամուսնալուծությունը վերածվում է ոչ միայն զույգի բաժանման, այլ ընտանիքի և երեխայի սոցիալական պաշտպանության խախտման:

Այսպիսով, ամուսնալուծությունների պատճառները Հայաստանում պետք է դիտարկել որպես բազմաշերտ երևույթ, որտեղ անհատական հարաբերությունները խաչվում են տնտեսական անապահովության, մշակութային փոփոխությունների և համակարգային բացերի հետ: Առանց այս գործոնների համակցված վերլուծության հնարավոր չէ ձևավորել արդյունավետ կանխարգելիչ և աջակցող քաղաքականություն:

2. Իրավական կարգավորումների վերլուծություն

Աղյուսակ 1 ով ամուսնալուծությունների թվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարգացած երկրներում այն զգալիորեն տարբեր է զարգացող և թույլ զարգացած երկրների թվերի համեմատությամբ: Ուսումնասիրելով Հայաստանում իրավական համակարգը պարզ է դառնում, որ ընտանիքին լքելը, երեխաների լավագույն շահն անտեսելը ունեն անպատժելիության արմատներ: Դրանք են.

- Հայաստանում ծնողական պարտականություններից խուսափումը քրեականացված չէ:
- Ալիմենտի չվճարումը «ապացուցելի չէ», քանի որ չկա վերահսկողության իրական մեխանիզմ:
- Դատարանները չունեն պարտադիր հոգեբանական փորձաքննության պահանջ:
- Կատարողական ծառայությունը (ԴԱՀԿ) չունի լիազորություններ:
- Դատարանների պրակտիկայում գործերը ձգձգվում են 7–36 ամիս, ինչը հակասում է երեխայի լավագույն շահին:

- Երեխայի կարծիքը գրեթե չի լսվում:
- Ծնողի շարունակական բացակայությունը չի դիտարկվում որպես վնաս:
- Չնայած որ օրենքը նախատեսում է ԿԴԻ, սոցիալական ծառայողներն այն չեն կիրառում՝ իրավասության սահմանափակության և մեխանիզմի բացակայության պատճառով:

Ուսումնասիրելով զարգացած երկրների փորձը տեսնում ենք, որ.

1) Զարգացած երկրներում օրենքը ոչ միայն սահմանում է, այլ նաև ստիպում է կիրառել.

- Ալիմենտի ապահովում (վերցնում են աղբյուրից):

- Չվճարելու դեպքում՝ վարչական, իրավական պատժամիջոցների փաթեթ:

- Համակարգերում աշխատում է աստիճանական՝ հարկային վերադարձի պահում, գույքային սահմանափակումներ, վարորդական լիցենզիայի սահմանափակումներ:

2) ԱՄՆ-ում կա նաև քրեական պատասխանատվության դաշնային հիմք՝ որոշ պայմաններում դիտավորյալ չվճարելու համար (18 U.S.C. §228):

3) ԵՄ-ում գործում է Maintenance Regulation (EC) No 4/2009, որը հեշտացնում է այլ երկրում կատարումը և կենտրոնական մարմինների համագործակցությունը: Բացի դրանից կա նաև Հաագայի կոնվենցիաների մեխանիզմային ցանց՝ maintenance-ի միջազգային վերականգնման համար:

4) Որոշ երկրներում պետությունը «նախավճար» է տալիս երեխային: OECD-ի համեմատական նյութերում նշվում է, որ մի շարք երկրներում կիրառվում է պետական երաշխիք (ավանս) (maintenance advance/guarantee)՝ որից հետո պետությունը հետ է ստանում պարտապանից:

Իրավական եզրահանգում .

Զարգացած երկրներում ծնողը կարող է հեռանալ ընտանեկան հարաբերությունից, բայց չի կարող ազատվել պարտավորությունից, որովհետև համակարգը աշխատեցնում է ինքնաշխատ պահումներ՝ հարկային, վարչական լծակներ, որոշ երկրներում՝ քրեական շեմ:

Զարգացող երկրներում.

- Օրենքը հաճախ կա, բայց կիրառումը խոցելի է, կատարողականության ու ինստիտուցիոնալ կարողության թույլ է:

- Հավաքագրումը դժվար է, քանի որ եկամուտները «չեն երևում»:

- Համակարգը հաճախ դատարանակենտրոն է՝ ալիմենտի նշանակման կատարումը (փոփոխումը) չափազանց կախված է դատարաններից, ինչը դանդաղեցնում է գործընթացը և թանկացնում կողմերի համար:

- Շատ դեպքերում կա պարտավորություն, բայց «ավտոմատ» չի աշխատում և արդյունքում պատասխանատվությունը հաճախ «մնում է թղթի վրա» կամ՝ կախված անհատի ջանքերից:

Թույլ զարգացած երկրներում հիմնական ռիսկը պետության գործիքակազմի բացակայությունն է:

Այս խմբում հիմնական խնդիրները իրավականից ավելի կարողունակության են.

- Քաղաքացիական գրանցումների թուլություն,
- հարկային, եկամտային տվյալների բացակայություն,
- կատարողական ծառայությունների սահմանափակ գործառույթ,
- սոցիալական պաշտպանության թույլ ծածկույթ:

Արդյունքում ալիմենտը դառնում է դժվար վճարվողվող պարտավորություն, իսկ երեխայի պաշտպանությունը հաճախ տեղափոխվում է բարեգործության, համայնքային մեխանիզմների, կամ նվազագույն սոցիալական նպաստների մակարդակ: Հետևաբար, ծնողներից մեկի կողմից ընտանիքի և երեխայի լքումը, նրա անպատժելիությունը սուկ ընտանեկան հակամարտություն չէ: Այն համակարգային երևույթ է, որը բերում է խորքային հոգեբանական վնասների, սոցիալական անկայունության, տնտեսական ծանրաբեռնվածության և պետության նկատմամբ վատահույսության նվազման: Չնայած, որ ՄԱԿ-ի Երեխայի Իրավունքների Կոնվենցիան պահանջում է ապահովել երեխայի լավագույն շահը, սակայն ՀՀ իրավական դաշտում այդ սկզբունքը միշտ չէ, որ գտնում է պատշաճ կիրառություն և պաշտպանում է ընտանիքի լքված անդամների իրավունքներն ու լուծում նրանց խնդիրները: Հետևաբար նման ընտանիքներում ոչ միայն խաթարվում է ընտանիքների բնականոն կյանքը, նաև անտեսվում է ընտանիքի երեխաների լավագույն շահը: Ուստի

անհրաժեշտություն կա խնդրի խորքային իրավական, բարոյական և սոցիալական լուծման:

Վերը նշված իրավիճակը՝ այն է ամուսնալուծությունների թիվն ու ծնողներից մեկի կողմից ընտանիքը լքելու վտանգը, առկա է գրեթե բոլոր զարգացած և ոչ զարգացած երկրներում: Լքված ընտանիքների բազմաթիվ կանանց հետ անցկացվող ուսումնասիրությունների ընթացքում պարզվում է, որ նրանցից շատերը չգիտեն իրենց ամուսինների ոչ միայն գտնվելու հասցեն, այլ՝ նաև երկիրը: Համեմատականներ անցկացնելով վերոնշյալ խնդրի շուրջ մի քանի երկրների իրավական և սոցիալ-հոգեբանական դաշտի հետ, ունենում ենք հետևյալ պատկերը.

ՌԴ, որը տարածաշրջանում ունի ամենախիստ համակարգը .

- ՔՕ 157 — ալիմենտ չվճարելը քրեական հանցագործություն է:
- Գործում է վարորդական իրավունքից զրկում:
- Գործում է հաշիֆսերի սառեցում:
- Պարտքը գրանցվում է դաշնային շտեմարանում:
- Սոցիալական ծառայողներն ունեն պարտադիր միջամտության իրավունք:

Ռուսաստանի մոտեցումը ցույց է տալիս, որ լքման կանխարգելումը հնարավոր է միայն պատժի և վերահսկողության համակցությամբ: Աղյուսակ 1 ով պատկերված՝ նվազել է ամուսնալուծությունների թիվը:

Եվրոպական և սկանդինավյան մոդելներ .

Գերմանիա — Jugendamt

- Պետական վերահսկող մարմին, որը պարտադիր է գործում բոլոր դեպքերում:
- Ծնողի լքումը դիտարկվում է որպես երեխայի համար վտանգ:

Ֆրանսիա — քրեականացում:

- Code pénal 227–3 — մինչև 2 տարվա ազատազրկում:

Կանադա — ֆինանսական պատժամիջոցներ:

- Աշխատավարձի պահում,
- հարկային վերադարձների կասեցում, հաշիֆսերի սառեցում:

Նորվեգիա — ավտոմատացում:

- ալիմենտի ավտոմատ պահում՝ առանց դատարանի:
- ծնողի պարտադիր հոգեբանական խորհրդատվություն:

Համեմատական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ՝

- Հայաստանը զգալիորեն հետ է մտնում վերոնշյալ խնդրի լուծման մեխանիզմների կիրառման ոլորտում:
- Անպատժելիությունը դառնում է նորմ:
- Երեխայի իրավունքները գրեթե չեն պաշտպանվում:
- ԿԴԻ կարգավիճակը չի կիրառվում նույնիսկ այն դեպքում, երբ տվյալներն ապացուցում են, որ «ԿԴ իրավիճակում գտնվող ընտանիքների 1/3 լքված է»:
- Հայաստանը չունի ոչ պատժիչ, ոչ վերահսկողական մեխանիզմներ:

Աղյուսակ 2.

Միջազգային Համեմատություն.

Պետություն	Իրավական խստության ցուցիչ	Կատարողական արդյունավետության ցուցիչ	Երեխայի շահի լավագույն կիրառման մակարդակ
Հայաստան	1	1	2
Ռուսաստան	4	4	4
Գերմանիա	5	5	5
Ֆրանսիա	5	5	5
Կանադա	4	4	5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ամուսնալուծության և ընտանիքների լքման խնդրի մյուս երկրներում առկա փորձը, գալիս ենք այն համոզմունքին, որ ՀՀ-ում կարծես հենց պետության կողմից՝ իրավական դաշտի բացթողումների արդյունքում, «հովանավորվում է» նման անհատի՝ ընտանիքը լքող ծնողի, վարքային դրսևորումները: Նման վարքագծի արդյունքում անտեսվում է ընտանիքում գտնվող երեխաների լավագույն շահը, որը շատ հաճախ բերում է տվյալ երեխայի կյանքի որակի փոփոխության և ծանր հոգեբանական հետևանքների: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ հաճախ դեռահասության տարիքում ծանր վարքային խնդիրներ ունեցող երեխաների վարքագծի պատճառը հենց այդպիսի

ընտանիքում գտնվելն է: Ինչպես նաև՝ միայնակ և լքված ծնողի բարոյահոգեբանական ծանր վիճակը, որն էլ իր հերթին է «նպաստում» երեխայի ներքին հուզական դաշտի ձևավորմանը:

Հոդվածում ներկայացվում է ծնողներից մեկի կողմից լքված ընտանիքներում առաջացած խնդիրների սոցիալ-հոգեբանական հետևանքները, ՀՀ խնդրին առնչվող առկա իրավիճակը, բացթողումները և առաջարկում է բարեփոխումների մեխանիզմներ՝ միաժամանակ ներկայացնելով եվրոպական, սկանդինավյան, ռուսական և կովկասյան մոդելների համեմատություն: Հոդվածի նպատակն՝ բացահայտել ընտանիքների լքման պատճառները, դրանց բարոյահոգեբանական և տնտեսական հետևանքները ընտանիքի բոլոր անդամների համար: Առաջարկել միջոցներ՝ նման խորը սոցիալ հոգեբանական խնդիրների հնարավորինս կանխման համար: Տիրող անպատժելիությունը վերարտադրում է լքման ցիկլը, քանի որ չկա զսպման ոչ մի մեխանիզմ: Երեխայի լավագույն շահը չի պաշտպանվում, ԿԴԻ կարգավիճակը չի կիրառվում, չնայած, որ պետությունը ընտանիքի երկրորդ ծնողի պարտականությունները մասամբ վերցնում է իր վրա, որոշակիորեն լուծելով սոցիալական խնդիրները: Սակայն ընտանիքի բարոյահոգեբանական խնդիրները մնում են անլուծելի, առաջացնելով երբեմն նաև անդառնալի ծանր հետևանքներ և արդյունքում ի հայտ են գալիս խեղված ճակատագրեր:

Միջազգային համեմատությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում ընտանիքների լքման, երեխայի լավագույն շահի անտեսման իրավիճակը կարող է բարեփոխվել միայն այն դեպքում, եթե կիրառվի խիստ վերահսկողություն, պարտադիր միջամտություն և պատասխանատվության ամբողջական մոդել, այն է.

7. Առաջարկություններ (ընդլայնված)

1. Քրեականացնել ծնողական պարտականություններից խուսափումը:
2. Ստեղծել ԿԴԻ-ի պարտադիր ճանաչման ընթացակարգ:
3. Ներառել հոգեբանական փորձաքննության պարտադիր պահանջ:
4. Ներառել իրականացվող վերահսկողության համակարգ (գերմանական մոդել):
5. Իրականացնել ֆինանսական պատժամիջոցներ (կանադական մոդել):
6. Իրականացնել վարորդական իրավունքից զրկում (ռուսական մոդել):
7. Սոցիալական ծառայողներին տալ միջամտության իրավասություն:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցություն:
9. Երեխայի ձայնի պարտադիր լսում:
10. Ստեղծել պետական տվյալների միասնական շտեմարան :

REFERENCE LIST

- Amato, P. R.** (2000). The consequences of divorce for adults and children. *Journal of Marriage and Family*, 62(4), 1269–1287. <https://doi.org/10.1111/j.1741-3737.2000.01269.x>
- Bowlby, J.** (1988). *A secure base: Parent-child attachment and healthy human development*. Basic Books.
- Federal Ministry for Family Affairs, Senior Citizens, Women and Youth** (Germany). (n.d.). *Jugendamt regulations and child welfare responsibilities*. <https://www.bmfsfj.de>
- Government of France.** (n.d.). *Code pénal* (Art. 227-3). <https://www.legifrance.gouv.fr>
- Government of Canada.** (n.d.). *Federal Child Support Guidelines and enforcement mechanisms*. <https://www.justice.gc.ca>
- Hetherington, E. M., & Kelly, J.** (2002). *For better or for worse: Divorce reconsidered*. W. W. Norton.
- Russian Federation.** (n.d.). *Criminal Code of the Russian Federation* (Art. 157).
- Republic of Armenia.** (1996). *Family Code of the Republic of Armenia*.
- Republic of Armenia.** (2014). *Law on Social Support*.
- United Nations Children’s Fund.** (1989). *Convention on the Rights of the Child*. United Nations.

РЕЗЮМЕ

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ И ПРАВОВЫЕ ПРОЯВЛЕНИЯ В ПОКИНУТЫХ СЕМЬЯХ

Нарине Մկրտչյան

Проблема семей, оставленных одним из родителей, представляет собой одну из наиболее острых социально-психологических и правовых проблем современного общества. В таких семьях формируется состояние трудной жизненной ситуации,

сопровождающееся глубокими психологическими, социальными и поведенческими последствиями, особенно для детей.

В статье рассматриваются социально-психологические и правовые проявления в семьях, оставленных одним из родителей, с акцентом на принцип наилучших интересов ребенка. На основе эмпирического исследования 270 семей, находящихся в трудной жизненной ситуации в Республике Армения, а также анализа международных исследований и правовых моделей, выявлены основные факторы, способствующие росту числа разводов и семейного оставления.

Результаты исследования показывают, что отсутствие эффективных правовых механизмов ответственности, недостаточный контроль за исполнением алиментных обязательств и ограниченные возможности вмешательства социальных служб формируют атмосферу безнаказанности, что усугубляет социально-психологические проблемы в оставленных семьях. В статье проводится сравнительный анализ правовых моделей развитых, развивающихся и слаборазвитых стран и предлагаются направления реформ, направленные на усиление защиты прав ребенка и повышение ответственности родителей.

Ключевые слова: трудная жизненная ситуация, развод, оставление семьи, алименты, безнаказанность, социально-психологические проблемы, интересы ребенка.

SUMMARY

SOCIO-PSYCHOLOGICAL AND LEGAL MANIFESTATIONS IN ABANDONED FAMILIES

Narine Mkrtchyan

The phenomenon of families abandoned by one parent represents a significant social, psychological, and legal challenge in contemporary societies. Such families often experience a difficult life situation characterized by increased psychological vulnerability, social exclusion, and behavioral risks, particularly affecting children. This article examines the social-psychological and legal manifestations in families abandoned by one parent, with a special focus on the principle of the best interests of the child. The study is based on empirical research

conducted among 270 families in difficult life situations in the Republic of Armenia, combined with an analysis of international research findings and comparative legal frameworks. The findings indicate that the lack of effective legal enforcement mechanisms, insufficient control over child support obligations, and limited authority of social services contribute to an environment of impunity. This situation exacerbates the social and psychological consequences for abandoned families. A comparative analysis of legal approaches in developed, developing, and less developed countries is presented, highlighting the need for comprehensive reforms aimed at strengthening parental responsibility and ensuring effective protection of children's rights.

***Keywords:** difficult life situation, divorce, family abandonment, child support, impunity, social and psychological problems, best interests of the child.*

Հոդվածը ստացվել է՝ 25.08. 2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 30.08. 2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 08.10.2025

ԵՐԵՒԱՅԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՐՆ ԱՎԱԳ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խ. Արմվյան անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ vladimir.s.karapetyan@gmail.com

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՄԻՐԱԴՅԱՆ

Խ. Արմվյան անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ amiraghyan.80@mail.ru

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

Խ. Արմվյան անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ ispiryanmariam@aspu.am

DOI: 10.24234/scientific.v3i50.243

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները և դաստիարակի ու երեխայի միջև ձևավորվող հուզական կապերի ազդեցությունը այդ գործընթացի վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում մանկավարժական միջավայրում հուզական անվտանգության, վստահության և փոխադարձ ըմբռնման դերին՝ որպես երեխայի սոցիալական վարքագծի և հոգեկան կայունության ձևավորման կարևոր նախադրյալներ: Հոդվածի նպատակն է հիմնավորել երեխա-դաստիարակ հուզական կապերի նշանակությունն ավագ նախադպրոցականի սոցիալ-հոգեբանական զարգացման գործընթացում և բացահայտել այդ կապերի դրսևորման հիմնական ձևերն ու մեխանիզմները: Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է համապարփակ դիտարկումներ, հարցազրույցներ՝ PARLA մեթոդի կիրառմամբ, ԿՎԹ տեխնիկաներ և վարժություններ՝ ուղղված երեխայի և դաստիարակի փոխազդեցության բնույթի, հաղորդակցման ձևերի և հուզական արձագանքների գնահատմանը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ դաստիարակի

զգայուն, հուզականորեն աջակցող և ապրումակցային մոտեցումները նպաստում են երեխայի հետ վստահելի և անվտանգ կապերի ձևավորմանը, որոնք ուղղակիորեն անդրադառնում են երեխայի սոցիալական հմտությունների, ինքնարտահայտման և հուզական ինքնակարգավորման զարգացման վրա: Բացի այդ, հիմնավորվել է, որ դաստիարակի բաց և կառուցողական հարաբերությունները նպաստում են խմբային գործունեության ընթացքում երեխաների ակտիվ ներգրավվածությանը, նախաձեռնողականության դրսևորմանը և դրական միջանձնային փոխհարաբերությունների ձևավորմանը:

Բանալի բառեր՝ ավագ նախադպրոցական տարիք, սոցիալ-հոգեբանական զարգացում, հուզական կապ, երեխա-դաստիարակ փոխազդեցություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը հանդիսանում է անձի զարգացման կարևորագույն փուլերից մեկը, որի ընթացքում ձևավորվում են սոցիալ-հոգեբանական հիմնարար կարողություններն ու հմտությունները: Տարիքային այս փուլում հատկապես նշանակալի է ավագ նախադպրոցական շրջանը, երբ երեխան ակտիվորեն յուրացնում է սոցիալական նորմերն ու վարքագծային մոդելները, զարգանում են հաղորդակցման հմտությունները, ինքնագնահատականը և հուզական ինքնակարգավորման կարողությունը: Այս գործընթացում կարևոր դեր ունի սոցիալական միջավայրը, որի առանցքային բաղադրիչներից է դաստիարակը՝ որպես երեխայի համար նշանակալի մեծահասակ: Ժամանակակից հոգեբանական և մանկավարժական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխայի և դաստիարակի միջև ձևավորվող հուզական կապերը, հարաբերությունները զգալի ազդեցություն են ունենում երեխայի սոցիալ-հոգեբանական զարգացման վրա: Վստահության, հուզական անվտանգության և ապրումակցության վրա հիմնված հարաբերությունները նպաստում են երեխայի սոցիալական ակտիվության բարձրացմանը, դրական ինքնընկալման ձևավորմանը և միջանձնային փոխհարաբերությունների արդյունավետ զարգացմանը: Մինևույն ժամանակ, հուզական անբավարար կամ անկայուն հարաբերությունները կարող են բացասաբար

անդրադառնալ երեխայի վարքագծային դրսևորումների, սոցիալական հարմարվողականության և հուզական կայունության վրա:

Նախադպրոցական կրթական միջավայրում դաստիարակի մասնագիտական պատրաստվածությունը, հաղորդակցման ոճը և հուզական ներգրավվածությունը կարևոր նախադրյալներ են երեխայի բարենպաստ զարգացման համար: Դաստիարակը ոչ միայն կրթական գործընթացի կազմակերպիչն է, այլև հուզական աջակցողը, ում վերաբերմունքը և փոխազդեցության ձևերը մեծապես պայմանավորում են երեխայի ինքնարտահայտման հնարավորությունները և սոցիալական փորձի որակը: Չնայած թեմայի կարևորությանը՝ ավագ նախադպրոցական տարիքում երեխա-դաստիարակ հուզական կապերի ազդեցության խնդիրը դեռևս պահանջում է խորացված ուսումնասիրություն՝ հաշվի առնելով ժամանակակից կրթական պահանջները և երեխայակենտրոն մոտեցումների զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի սոցիալ-հոգեբանական զարգացման գործընթացը ավագ նախադպրոցական տարիքում պայմանավորված է մի շարք փոխկապակցված գործոններով, որոնց մեջ առանցքային տեղ են զբաղեցնում մեծահասակների հետ ձևավորվող հուզական կապերը, փոխհարաբերությունները: Դաստիարակը նախադպրոցական կրթական միջավայրում հանդես է գալիս որպես երեխայի համար նշանակալի սոցիալական կերպար, որի հետ փոխազդեցությունը կարևոր ազդեցություն է ունենում երեխայի հուզական, սոցիալական և վարքագծային զարգացման վրա: Երեխա-դաստիարակ հուզական հարաբերությունների, կապերի տեսական հիմքերի վերլուծության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Ջ. Բոուլբիի տեսությունը (Bowlby, 1969), ըստ որի՝ երեխայի և նշանակալի մեծահասակի միջև ձևավորվող անվտանգ հուզական կապը հանդիսանում է անձի հոգեկան առողջության և սոցիալական հարմարվողականության հիմք: Թեև սկզբնապես տեսությունը վերաբերում էր մայր-երեխա հարաբերություններին, հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մանկավարժը ևս կարող է հանդես գալ «կարևոր կերպար», հատկապես նախադպրոցական տարիքում (Ainsworth, 1978; Howes & Spieker, 2008):

Ավագ նախադպրոցական տարիքում դրական, հուզական կապը դաստիարակի հետ նպաստում է երեխայի ինքնավստահության բարձրացմանը, սոցիալական նախաձեռնողականությանը և հուզական ինքնակարգավորմանը, մինչդեռ անկայուն հարաբերությունները կարող են հանգեցնել սոցիալական մեկուսացման կամ վարքային խնդիրների: Լ. Ս. Վիգոտսկու սոցիալ-մշակութային տեսության համաձայն (Vygotsky, 1978), երեխայի հոգեբանական զարգացումը իրականացվում է սոցիալական փոխազդեցության միջոցով: Դաստիարակը հանդես է գալիս որպես միջնորդ՝ երեխային աջակցելով «մոտակա զարգացման գոտում»: Այս համատեքստում դաստիարակի հուզական աջակցությունը և ապրումակցային վերաբերմունքը ոչ միայն նպաստում են ճանաչողական զարգացմանը, այլև ապահովում են երեխայի սոցիալ-հոգեբանական կայունությունը: Հուզականորեն աջակցող փոխազդեցությունը ստեղծում է այնպիսի միջավայր, որտեղ երեխան իրեն զգում է պաշտպանված, ընդունված և գնահատված: Ա. Բանդուրայի մոտեցման համաձայն (Bandura, 1977), երեխաները սովորում են դիտարկման և մոդելավորման միջոցով, իսկ մանկավարժը երեխայի համար հանդես է գալիս որպես սոցիալական վարքագծի և հուզական արձագանքների մոդել: Նրա հաղորդակցման ոճը, հույզերի արտահայտման ձևերը և կոնֆլիկտների կարգավորման մեխանիզմները երեխաների կողմից ներքնայնացվում են և արտացոլվում սեփական վարքագծում: Այս տեսանկյունից դաստիարակի հուզական գրագիտությունը և ինքնակարգավորման հմտությունները կարևոր պայման են երեխաների սոցիալապես ընդունելի վարքագծի և հուզական կայունության զարգացման համար: Հումանիստական մոտեցման ներկայացուցիչները (Rogers, 1961; Maslow, 1970) անձի զարգացման գործում կարևորում են ապրումակցման և անկեղծ հարաբերությունների դրսևորումը: Դաստիարակի կողմից երեխայի անհատականության ընդունումը և ապրումակցումը նպաստում են երեխայի ինքնընկալմանը, դրական հույզերի ձևավորմանը, ինքնաճանաչմանը, ինչը սոցիալ-հոգեբանական զարգացման կարևոր բաղադրիչ է ավագ նախադպրոցական տարիքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՄ

Երեխաների և դաստիարակի միջև հուզական կապերի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունն ավագ նախադպրոցական

տարիքի երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացման վրա բացահայտելու նպատակով կազմակերպվել է հետազոտություն: Հետազոտությանը մասնակցել են 30 ավագ նախադպրոցական տարիքի երեխաներ (5–6 տարեկան) և 10 դաստիարակ՝ տարբեր նախադպրոցական կրթական հաստատություններից: Հետազոտության ընթացքում կիրառվել են մի շարք մեթոդներ. 1) դիտում՝ միտված երեխա-դաստիարակ փոխազդեցության, հուզական արձագանքների, հաղորդակցման ձևերի և վարքագծային դրսևորումների ուսումնասիրմանը: Դիտարկումները իրականացվել են բնական միջավայրում՝ խաղային, ուսումնական և առօրյա գործունեության ընթացքում, 2) հարցազրույց դաստիարակների հետ՝ PARLA մեթոդի կիրառմամբ՝ պարզելու նրանց վերաբերմունքը երեխաների հուզական կարիքների նկատմամբ, հաղորդակցման ռազմավարությունները և ստեղծված դժվարությունների հաղթահարման մոտեցումները, 3) ԿՎԹ տեխնիկաներ և վարժություններ՝ ուղղված երեխայի և դաստիարակի փոխազդեցության բնույթի, հաղորդակցման ձևերի և հուզական արձագանքների գնահատմանը, 4) քանակական և որակական վերլուծության մեթոդներ (համեմատական վերլուծություն, տոկոսային հաշվարկներ և դիտարկումների բովանդակային վերլուծություն): PARLA մեթոդի կիրառմամբ իրականացվել է հարցազրույց դաստիարակների շրջանում՝ պարզելու, թե, որ իրավիճակներում են առավելապես առաջանում բախում դիրքորոշումների, կարծիքների, տեսակետների, ցանկությունների և հնարավորությունների միջև՝ առաջ բերելով հոգեբանական անհարմարություն, որն էլ իր հերթին առաջ է բերում հուզական կապի խախտում. **Problem** (խնդիր)՝ դաստիարակը հիշում է անցյալում տեղի ունեցած որևէ խնդրահարույց իրավիճակ և մանրամասն ներկայացնում այն: **Action** (գործողություն)՝ ներկայացնում է այն գործողությունները, որոնք կատարել է տվյալ իրավիճակում: **Result** (արդյունք)՝ Նկարագրում և գնահատում է ստացված արդյունքներն ու իր գործողությունների հետևանքները: **Learned** (սովորել)՝ Դաստիարակը նկարագրում է այն փորձը, որը ստացել է խնդրահարույց իրավիճակի լուծման արդյունքում: **Applied** (կիրառում)՝ Հետազոտվողը ներկայացնում է, թե ինչպես է օգտագործել ստացված գիտելիքները հետագա կենսագործունեության ընթացքում: Այս հինգ քայլից բաղկացած հարցման ընթացքում պարզ է դառնում, թե ո՞ր իրավիճակներն է դաստիարակը համարում խնդրահարույց, ինչպե՞ս է լուծում

խնդիրները, ինչքանով է պատրաստ հետազոտվողը իր վրա վերցնել պատասխանատվություն որևէ աշխատանքի համար, ինչպե՞ս է կատարում փաստարկումներ: Հարցազրույցի ժամանակ ներկայացված իրավիճակների վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ հետազոտվողներից 12%-ի մոտ առկա է հուզական կապի բարձր, 25%ի մոտ միջին և 63%ի մոտ ցածր մակարդակ:


PARLA մեթոդը, որով բացահայտեցինք հուզական կապի առկա մակարդակը օգնեց նաև պարզել, թե երեխաների շրջանում, որ իրավիճակներում է առավելապես նկատվում հուզական կապի ցածր մակարդակ: Արդյունքների վերլուծության արդյունքում ըստ հարցազրույցի ժամանակ դաստիարակների կողմից ներկայացված իրավիճակների պարզ դարձավ, որ 5-6 տարեկան երեխաների շրջանում հուզական կապի ցածր մակարդակ նկատվում է առավելապես հետևյալ իրավիճակներում՝

- ծնող- երեխա բաժանում՝ 40% (12 հոգի)
- վեճեր հասակակիցների հետ՝ 50% (15 հոգի)
- ընտանեկան տարաձայնություններ՝ 10% (3 հոգի):

Նախնական տվյալներ ձեռք բերելուց հետո կազմակերպվել է հուզական կապի ձևավորմանը, ամրապնդմանը, ինչպես նաև սեփական հույզերը ճանաչելու հմտությունների ձևավորմանը միտված աշխատանք: Այդ նպատակով առանձնացվել են ԿՎԹ տեխնիկաներ և վարժություններ: Իրականացված աշխատանքից հետո փորձարկվողների շրջանում ձեռք ենք բերել վերջնական տվյալները: Արդյունքները ներկայացված են տրամագիր 1-ում.

Տրամագիր 1.

Նախնական և վերջնական արդյունքներ.



Ձեռք բերված տվյալներից ակնհայտ է դառնում, որ ԿՎԹ տեխնիկաները նպաստել են հուզական կապի մակարդակի բարձրացմանը երեխա-դաստիարակ փոխհարաբերությունների տիրույթում:


Ըստ ստուգիչ փուլի արդյունքների վերլուծության, 5-6 տարեկան երեխաների շրջանում հուզական կապի ցածր մակարդակ նկատվում է առավելապես հետևյալ իրավիճակներում՝

- ծնող- երեխա բաժանում 21% (6 հոգի),
- վեճեր տարեկիցների հետ 25% (8 հոգի),
- ընտանեկան տարաձայնություններ 8% (2 հոգի):

Ձեռք բերված տվյալները ներկայացված են տրամագիր 2-ում:

Տրամագիր 2.

Նախնական և վերջնական տվյալներ.



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծված տեսական մոտեցումների և իրականացված հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ

- երեխայի և դաստիարակի միջև ձևավորվող հուզական կապերը բազմաշերտ ազդեցություն ունեն երեխայի սոցիալ-հոգեբանական զարգացման վրա: Դրանք պայմանավորում են երեխայի հուզական անվտանգությունը, սոցիալական հմտությունների զարգացումը, ինքնակարգավորումը և սոցիալական ադապտացիան,

- ավագ նախադպրոցական տարիքում ավելի հաճախ նկատվում են իրավիճակի այուրեկտիվ հուզական դրսևորումներ, երբ հաղորդակցվողները միմյանց հետ շփվելիս երևույթը ամբողջական չեն ընկալում, որն էլ հուզական կապի խաթարման պատճառ է դառնում,
- դաստիարակի հուզական զգայունությունը և ապրումակցային վերաբերմունքը էական դեր ունեն ավագ նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հոգեբանական զարգացման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Карпетян В., Даллакян А., Хачатрян Э.** (2020). Развитие игровой деятельности дошкольников экспериментальным методом PARLA, *Психология*, ИГУ.
- Bowlby, J.** (1969). *Attachment and Loss: Vol. 1. Attachment*. London: Penguin Books.
- Ainsworth, M.** (1978). *Patterns of Attachment*. Hillsdale, NJ: Erlbaum.
- Vygotsky, L. S.** (1978). *Mind in Society*. Cambridge, MA: Harvard University Press.
- Bandura, A.** (1977). *Social Learning Theory*. Englewood Cliffs, NJ: Prentice Hall.
- Rogers, C.** (1961). *On Becoming a Person*. Boston: Houghton Mifflin.
- Howes, C., & Spieker, S.** (2008). Attachment relationships in the context of multiple caregivers.

REFERENCE LIST

- Karapetyan V., Dallakyan A., Khachatryan E.** (2020). Razvitie igrovoi deyatel'nosti doshkol'nikov eksperimental'nym metodom PARLA (*Development of Preschoolers' Game Activity through Experimental Method PARLA*). *Psikhologiya*, IGU.
- Bowlby, J.** (1969). *Attachment and Loss: Vol. 1. Attachment*. London: Penguin Books.
- Ainsworth, M.** (1978). *Patterns of Attachment*. Hillsdale, NJ: Erlbaum.
- Vygotsky, L. S.** (1978). *Mind in Society*. Cambridge, MA: Harvard University Press.
- Bandura, A.** (1977). *Social Learning Theory*. Englewood Cliffs, NJ: Prentice Hall.
- Rogers, C.** (1961). *On Becoming a Person*. Boston: Houghton Mifflin.
- Howes, C., & Spieker, S.** (2008). Attachment relationships in the context of multiple caregivers.

РЕЗЮМЕ

РОЛЬ ЭМОЦИОНАЛЬНЫХ СВЯЗЕЙ МЕЖДУ РЕБЁНКОМ И ВОСПИТАТЕЛЕМ В ПРОЦЕССЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО РАЗВИТИЯ ДЕТЕЙ СТАРШЕГО ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА

Владимир Карапетян, Марианна Амирагян, Мариам Испирян

В статье рассматриваются особенности социально-психологического развития детей старшего дошкольного возраста и влияние эмоциональных связей, формирующихся между воспитателем и ребёнком, на данный процесс. Особое внимание уделяется роли эмоциональной безопасности, доверия и взаимопонимания в педагогической среде как важнейших предпосылок формирования социального поведения и психологической устойчивости ребёнка.

Целью статьи является обоснование значимости эмоциональных связей между ребёнком и воспитателем в процессе социально-психологического развития детей старшего дошкольного возраста, а также выявление основных форм и механизмов проявления данных связей. Методология исследования включает комплексные наблюдения, интервью с применением метода PARLA, техники и упражнения когнитивно-поведенческой терапии, направленные на оценку характера взаимодействия ребёнка и воспитателя, форм общения и эмоциональных реакций.

Результаты исследования показали, что чувствительные, эмоционально поддерживающие и эмпатийные подходы воспитателя способствуют формированию доверительных и безопасных связей с ребёнком, которые непосредственно влияют на развитие социальных навыков, самовыражения и эмоциональной саморегуляции детей. Кроме того, было обосновано, что открытые и конструктивные отношения воспитателя с детьми способствуют их активному вовлечению в групповую деятельность, проявлению инициативности и формированию позитивных межличностных взаимоотношений.

Ключевые слова: старший дошкольный возраст, социально-психологическое развитие, эмоциональная связь, взаимодействие ребёнок–воспитатель.

SUMMARY

THE ROLE OF EMOTIONAL BONDS BETWEEN THE CHILD AND THE EDUCATOR IN A SENIOR PRESCHOOLER'S SOCIO-PSYCHOLOGICAL DEVELOPMENT

Vladimir Karapetyan, Marianna Amiraghyan, Mariam Ispiryan

The article discusses the characteristics of the socio-psychological development of children at senior preschool age and the influence of emotional bonds formed between the educator and the child on this process. Special attention is paid to the role of emotional security, trust, and mutual understanding in the pedagogical environment as essential prerequisites for the formation of children's social behavior and psychological stability. The purpose of the article is to substantiate the significance of emotional bonds between the child and the educator in the process of socio-psychological development of senior preschoolers and identify the main forms and mechanisms of their manifestation. The research methodology includes comprehensive observations, interviews using the PARLA method, and CBT-based techniques and exercises aimed at assessing the nature of child–educator interaction, communication styles, and emotional responses. The research findings indicate that sensitive, emotionally supportive, and empathetic approaches adopted by educators contribute to the formation of trusting and secure bonds with children, which directly affect the development of children's social skills, self-expression, and emotional self-regulation. In addition, it has been substantiated that open and constructive educator–child relationships promote children's active involvement in group activities, the manifestation of initiative, and the formation of positive interpersonal relationships.

Keywords: senior preschool age, socio-psychological development, emotional bond, child–educator interaction.

Հոդվածը ստացվել է՝ 28.10. 2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 30.10. 2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 28.11.2025

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարան, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ bagrat.vardanyan@ysu.am

DOI: 10.24234/scientific.v3i50.244

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը վերաբերվում է Ռուսաստանի Դաշնությունում կենսանվտանգության իրավական և քաղաքական կառուցակարգերի համակարգային ուսումնասիրությանը՝ ընդգծելով ոլորտի օրենսդրական հիմքերը, միջազգային համագործակցության շրջանակները, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող կենսալաբորատորիաների շուրջ ձևավորված քաղաքական-անվտանգային քննարկումներն ու դրանց անդրադարձը Հայաստանի կենսանվտանգային միջավայրի վրա: COVID-19 համավարակից հետո կենսաբանական սպառնալիքների և դրանց կանխարգելման անհրաժեշտության մասին ակադեմիական քննարկումները նոր թափ են ստացել, ինչն էլ ձևավորել է աշխատանքի արդիականությունն ու գիտական նշանակությունը: Հոդվածի նպատակը կենսանվտանգության ապահովման ոլորտում Ռուսաստանի Դաշնության իրավաքաղաքական խնդիրների բացահայտումն ու ՀՀ կենսանվտանգության միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատումն է: Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել համակողմանի ուսումնասիրության ենթարկել Ռուսաստանի Դաշնությունում կենսանվտանգության ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական բազան, ինչպես նաև գնահատել Ռուսաստանի Դաշնության միջազգային և տարածաշրջանային համագործակցության

ռազմավարական ուղղությունները և քաղաքական մարտահրավերները կենսանվտանգության ապահովման ոլորտում: Հոդվածում քննարկվող խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների վերլուծության հիման վրա: Կիրառվել են համակարգային վերլուծության, համադրման, ինդուկցիայի, դեդուկցիայի մեթոդները: Հոդվածում հիմնավորվում է, որ Ռուսաստանի Դաշնությունում կենսանվտանգության ապահովման ոլորտի օրենսդրական և կառավարչական համակարգը ներկայումս բավարար մակարդակի վրա չէ և չի ապահովում ոլորտի համալիր կարգավորումը: Միաժամանակ հիմնավորվել է նաև, որ կենսանվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության կայուն և արդյունավետ քաղաքականության երաշխիքը թափանցիկ և բազմավեկտոր համագործակցությունն է:

***Բանալի բառեր:** կենսանվտանգություն, ազգային անվտանգություն, միջազգային համագործակցություն, կենսաբանական զենքի կոնվենցիա, կենսալաբորատորիա:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կենսանվտանգությունը հանդիսանում է ոչ միայն առանձին պետությունների, այլև ամբողջ համաշխարհային հանրության անվտանգության համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Այսօր արդեն ակնհայտ է, որ կենսանվտանգության հետ կապված խնդիրները արդիական են առավել քան երբևէ և պահանջում են միջազգային հանրության առավելագույն ուշադրությունը: Վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը, որպես կանոն առաջացնում են ոչ միայն առողջապահական, այլև քաղաքական, սոցիալական ու տնտեսական բնույթի մի շարք խնդիրներ: Այդ ամենի վառ ապացույցը COVID-19 համավարակն էր, որը էականորեն ազդեց կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա՝ առողջությունից մինչև տնտեսություն, աշխատանքի կազմակերպում, հաղորդակցություն և միջազգային կապեր: Բացի այդ, տեխնոլոգիական առաջընթացը՝ զենամի խմբագրման, սինթետիկ կենսաբանության և մոլեկուլային ինժեներիայի ոլորտներում, հսկայական գիտական հնարավորություններից զատ, ստեղծում է նաև նոր մարտահրավերներ, որոնց վերահսկումը պահանջում է գլոբալ համագործակցություն և պատասխանատվություն

(Rinaldi, 2024, p.455-456): Այս համատեքստում առավել կանոր է դառնում կենսանվտանգության ապահովման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը՝ իրավական, կառավարչական և քաղաքական ասպեկտներով, ինչը հնարավորություն կտա առավել փաստարկված կերպով հասկանալ երկրների պատրաստվածության մակարդակը՝ կենսաբանական սպառնալիքներին հակազդման գործընթացում: Քանի որ կենսանվտանգության ապահովման մակարդակից է նաև կախված հասարակական հարաբերությունների կայունությունը տարբեր ոլորտներում, ուստի դրա իրավական և քաղաքական կարգավորումը պետք է դիտվի որպես պետական քաղաքականության առաջնահերթություններից մեկը (Albert, C., Baez, A., & Rutland, J. 2021, p.83-105): Հարկ է նշել, որ Ռուսաստանի Դաշնությունը կենսանվտանգության ապահովման համակարգը դիտարկում է որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս, որը փոխկապակցված է անվտանգության այլ տեսակների: Ասվածի վկայությունն է այն, որ Ռուսաստանը ՀՀ-ում գործող և ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող կենսալաբորատորիաները համարում է ազգային անվտանգության սպառնալիք: Վերջին տարիներին, հատկապես COVID-19 համավարակից հետո, Ռուսաստանը վճռական քայլեր է ձեռնարկել կենսանվտանգության ապահովման ոլորտը կարգավորող օրենսդրությունը լավարկելու, ինչպես նաև միջազգային համագործակցությունը խթանելու ուղղությամբ (Завриев, С.К. 2022, p. 94-100): Սակայն կենսանվտանգության համակարգի համալիր կարգավորման հասնելու տեսանկյունից դեռևս առկա են մի շարք տեսական և գործնական խնդիրներ, որոնց լուծումը թաքնված է ոլորտի առանձնահատկությունների ճշգրիտ ընկալման և գիտահեն մոտեցումների մեջ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է քաղաքագիտությանը և այլ գիտակարգերին հատուկ մեթոդաբանությամբ, կիրառվել են համեմատական վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդական գործիքները, որոնք հնարավորություն են տալիս լավագույնս բացահայտելու Ռուսաստանի Դաշնության կենսանվտանգության համակարգի իրավաքաղաքական հիմնախնդիրները, նախանշել հնարավոր լուծումների հեռանկարները, ինչպես նաև գնահատել դրանց ազդեցությունը

Հայաստանի Հանրապետության կենսանվտանգության ապահովման միջավայրի վրա: Սա ենթադրում է ոլորտը կարգավորող իրավական և քաղաքական փաստաթղթերի, ինչպես նաև ոլորտի առաջատար հետազոտողների աշխատությունների ուսումնասիրություն և բովանդակային վերլուծություն: Հոդվածը հղումներ է կատարվում տարբեր գիտնականների աշխատություններին՝ ապահովելով գիտական հիմնավորվածություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՌԴ կենսանվտանգության ոլորտը կարգավորող իրավական դաշտը

Ինչպես արդեն նշեցինք Ռուսաստանի Դաշնության կենսանվտանգության ապահովման համակարգը դիտարկվում է որպես ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս: «Ազգային անվտանգություն» հասկացության սահմանումը տրված է Ռուսաստանի Դաշնության նախագահի 2021 թ. հուլիսի 2-ի № 400 հրամանով հաստատված Ազգային անվտանգության ռազմավարությունում: Այն սահմանվում է որպես՝ «Ռուսաստանի Դաշնության ազգային շահերի պաշտպանվածության վիճակ՝ արտաքին և ներքին սպառնալիքներից, որի պայմաններում ապահովվում են քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումը, կյանքի որակն ու մակարդակը, քաղաքացիական համերաշխությունը, Ռուսաստանի Դաշնության ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության պահպանումը, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը» (Указ Президента РФ No 400, 2021): ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության մեջ, ռազմավարական առաջնահերթությունների շարքում ընդգրկված են պետական և հասարակական անվտանգությունը, ինչպես նաև տեղեկատվական, տնտեսական և էկոլոգիական անվտանգությունը: Համապատասխան բաժիններում սահմանված են դրանց ապահովման նպատակներն ու խնդիրները, սակայն կենսանվտանգությունը, որպես անվտանգության առանձին ոլորտ չի ներառվել ռազմավարության մեջ:

Մինևույն ժամանակ, ազգային անվտանգության ռազմավարության մեջ կենսաբանական ռիսկերի մոնիթորինգի համակարգի զարգացումը դիտարկվում է որպես **պետական քաղաքականության խնդիր**՝ ուղղված ժողովրդագրական ներուժի

պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև **էկոլոգիական անվտանգության ապահովմանը**: Բացի այդ, ռազմավարության մեջ պետական և հասարակական անվտանգության սպառնալիքների թվում նշվում է նաև **կենսաբանական ահաբեկչության գործողությունների կանխարգելումը և չեզոքացումը**: Ըստ էության, կարող ենք փաստել, որ թեև կենսանվտանգությունը, որպես անվտանգության առանձին ոլորտ ներառված չէ ՌԴ ազգային անվտանգության ռազմավարության մեջ և կարելի է ասել դիտարկվում է անվտանգության այլ ճյուղերի՝ հատկապես էկոլոգիական անվտանգության համատեքստում, սակայն ռազմավարության բովանդակությունը ըստ էության ընդգծում է դրա անհրաժեշտությունն ու կարևորությունը: Կենսանվտանգության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման պահանջը արտահայտվեց նաև 2020 թվականին ՌԴ սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով: Ըստ պրոֆեսոր Ս.Ա. Ավակյանի՝ Սահմանադրության փոփոխությունների ընդունումը 2020 թվականին դարձավ նոր փուլ առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքի սահմանադրական հիմքերի ամրապնդման գործում: Այս իրավունքի բարձր երաշխիքները հանդիսանում են կենսանվտանգության ապահովման կարևորագույն պայման (Авакьян С.А. 2021, p.774):

Ա.Վ. Ֆեոկտիստովն ու Ե.Ն. Սկվորցովան որպես դրական նորույթ ընդգծում են «առողջ ապրելակերպի» հասկացության ամրագրումը Սահմանադրության մեջ: Հանրային առողջության զարգացումը՝ առողջ կենսակերպի տարածման միջոցով, կնպաստի հասարակության ընդհանուր իմունային մակարդակի և նոր վարակների տարածման նկատմամբ դիմադրողականության բարձրացմանը (Феокистов, А. В., & Скворцова, Е. Н., 2020, p.103): Սակայն հիմնական ռազմավարական փաստաթուղթը, որով սահմանվում են ՌԴ պետական քաղաքականության հիմքերը կենսանվտանգության ապահովման ոլորտում, հանդիսանում է 2019 թ. մարտի 11-ի «Քիմիական և կենսաբանական անվտանգության ապահովման պետական քաղաքականության հիմունքները մինչև 2025 թ. և հետագա հեռանկարը» սահմանելու մասին ՌԴ նախագահի № 97 (փոփոխությունը՝ 24 հունվարի 2025թ) հրամանագիրը: Այս փաստաթուղթը առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ

կենսանվտանգության ապահովումը սահմանում է որպես ազգային անվտանգության ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը:

Սույն փաստաթղթով նախանշվում են հետևյալ հիմնական սպառնալիքները.

- նոր կամ նախկինում անհայտ վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը, ինչպես նաև նախկինում հայտնի վարակիչ հիվանդությունների վերադարձը,
- գենային ինժեներիայի և սինթետիկ կենսաբանության անվերահսկելի կիրառումները,
- կենդանիների և բույսերի վարակիչ հիվանդությունների առաջացումը և տարածումը, որոնք վնասում են էկոհամակարգին,
- մարդու, կենդանիների և բույսերի գենոտիպի և ֆենոտիպի փոփոխությունները արտաքին միջավայրի ազդեցությամբ,
- հակաբիոտիկների նկատմամբ կայունության աճը,
- կենսաբանորեն վտանգավոր նյութերի հետ աշխատանք իրականացնող օբյեկտներում հավանական վթարները կամ դիվերսիաները,
- վտանգավոր կենսաբանական նյութերի և/կամ կենսատեխնոլոգիաների օգտագործմամբ ահաբեկչական գործողությունների իրականացումը:

Փաստաթղթով սահմանվում են նաև կենսանվտանգության ապահովման ոլորտում Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, այն է՝

- կենսաբանական ռիսկերի մշտադիտարկման համակարգի զարգացումը,
- նորմատիվ-իրավական բազայի և պետական կառավարման համակարգի արդիականացումը,
- կենսանվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների բարելավումը,
- կենսաբանական սպառնալիքների չեզոքացմանը, ռիսկերի կանխարգելմանն ու նվազեցմանը, բնակչության և կենսոլորտի պաշտպանությանն ուղղված արդյունավետ միջոցառումների իրականացումը (Указ Президента РФ No 97, 2019):

- Ազարյան, Ա. (2010). «Տիգրան Մեծ» բանաստեղծությունը: *Տիգրան Մեծ. մեկ աշխատանքի ցուցահանդես* («ժողովածու»), Երևան
- Աթաբեկյան, Ն. (2021). Արմեն Մալխասյան «Տիգրան Մեծ» պատմավեպի նախաբան, <https://forum.armedu.am/forum/> (19.04.2021)
- Դոլուխանյան, Ա. (2014). Պերճ Զեյթունցյանը հետադարձ և ապագայամետ գրականագիտական հայացքի կենտրոնում: *Գրական թերթ*: <https://www.grakantert.am/archives/5330> (27.08.2021)
- Զեյթունցյան, Պ. (1987). Ընտիր երկեր երկու հատորով, հատոր 1, Երևան, Սովետական գրող:
- Զեյթունցյան, Պ. (2010). Կենսամատենագիտություն, Երևան: ՀԳԱ:
- Մալխասյան, Ա. (2010). *Տիգրան Մեծ* պատմավեպ, Երևան: Բավիղ ՍՊԸ, <https://www.panarmenian.net/arm/news/52000/> (16.04.2021)

REFERENCE LIST

- Azaryan, A. (2010). *Stikhotvorenie «Tigran Velikii» (The poem “Tigranes the Great”)* In *Tigran Velikii: vystavka odnogo proizvedeniya* (sbornik), Yerevan.
- Atabekyan, N. (2021). *Predislovie k istoricheskomu romanu Armena Malkhasyana «Tigran Velikii» (Preface to Armen Malkhasyan’s historical novel “Tigran the Great”)*. <https://forum.armedu.am/forum/> (viewed: 19.04.2021).
- Dolukhanyan, A. (2014). *Perch Zeytuntsyan v tsentre retrospektivnogo i perspektivnogo literaturovedcheskogo vzglyada (Perch Zeytuntsyan at the center of retrospective and prospective literary criticism)*. Grakan Tert. 07/07/2014/, <https://www.grakantert.am/archives/5330> (viewed: 27.08.2021).

Malkhasyan, A. (2010). *Tigran Velikii istoricheskiy roman (Tigran the Great Historical novel)*. Yerevan: Bavig LLC, <https://www.panarmenian.net/arm/news/52000/> (viewed: 16.04.2021).

Zeytuntsyan, P. (1987). *Izbrannye proizvedeniya v dvukh tomakh (Selected works in two volumes)* (Vol. 1), Yerevan: Sovetskiy pisatel.

Zeytuntsyan, P. (2010). *Bibliografiya (Bibliography)*. Yerevan: Natsional'naya akademiya nauk Armenii.

ԱՄՓՈՓՈՒՄ

ՆԱԾԵՎԵԼ Է ՄԱՀՎԱՆԱՑՈՒ, ԴԱՐՁԵԼ ՀԶՈՐ ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱ

Մադոնա Մարտիրոսյան

Հայոց պատմության ամենահզոր թագավորներից մեկը Տիգրան Մեծն է, որի կյանքի ու պետական գործունեության մանրամասները սերնդեսերունդ փոխանցվել են և հասել մեր օրերին: Նրա թագավորական ու մարդկային առաքինությունները բարձր են գնահատվել հայ և օտար պատմիչների ու գրողների ստեղծագործություններում: Հոդվածը ներկայացնում է Տիգրան Մեծի կերպարի պատմականացումը գրականության մեջ՝ կիրառելով պատմահամեմատական մեթոդներ:

Ներկայացվող ուսումնասիրություններում ընդգծվում են նրա բոլոր արարչագործ ու անձնական հատկությունները, որոնք արտացոլվել են հայ հեղինակների պատմա-բանասիրական աշխատանքներում, մասնավորապես Պերճ Զեյթունցյանի, Արշակ Ազարյանի, Արմեն Մալխասյանի ստեղծագործություններում: Մեր նպատակն է ոչ միայն վեր հանել այս աշխատությունները, այլև արձանագրել պատմական փաստերը գեղարվեստական ձևաչափի ներքո, ընթերցողին հնարավորություն տալով դիտարկել պիեսը, պոեմը և պատմական համատեքստը միաժամանակ:

Այս ստեղծագործությունները լրացնում են գիտելիքները, խթանում Տիգրան Մեծի կերպարի վերախմաստավորումը և թույլ են տալիս գնահատել նրա կարևորությունը բազմակողմանի տեսանկյունից:

Բանալի բաներ՝ Տիգրան Մեծ, Պերճ Զեյթունցյան, Արշակ Ազարյան, Արմեն Մալխասյան, Բանաստեղծություն, պիես:

РЕЗЮМЕ

ОН РОДИЛСЯ СМЕРТНЫМ, СТАЛ МОГУЩЕСТВЕННЫМ ЦАРЁМ ЦАРЕЙ

Мадона Мартиросян

Один из наиболее могущественных царей в истории Армении-Тигран Великий, чьи жизненные и государственные деяния передавались из поколения в поколение и дошли до настоящего времени. Его царские и личностные добродетели высоко оценивались как армянскими, так и зарубежными историками и писателями. Статья рассматривает историческое осмысление образа Тиграна Великого в литературе с применением историко-сравнительного метода.

В анализируемых исследованиях выделяются все его творческие и личностные качества, отражённые в историко-филологических трудах армянских авторов, включая Перча Зейтуняна, Аршака Азаряна и Армена Малхасяна. Цель исследования заключается в систематизации этих трудов и фиксации исторических фактов в художественной форме, предоставляя читателю возможность сопоставлять пьесу, поэму и исторический контекст одновременно.

Данные произведения дополняют знания о Тигране Великом, способствуют переосмыслению его образа и позволяют оценить значение царя с многогранной научной точки зрения.

Ключевые слова: *Тигран Великий, Перч Зейтунян, Аршак Азарян, Армен Малхасян, поэзия, пьеса.*

Հորվածը տնագրվել է՝ 15.09. 2025

Հորվածն ուղարկվել է գրախոսման՝ 19.09. 2025

Հորվածը երաշխավորվել է տպագրության՝ 02.11.2025

ՀՐԱԶ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵԹԿՊԻ ասպիրանտ, Հայաստանի Հանրապետություն

Էլ. հասցե՝ petrosyanhrach97@gmail.com

DOI: 10.24234/scientific.v3i50.246

ԱՄՓՈՓՈՒՄ

Կրկեսի պատմությունը և կրկեսային արվեստի առաջացումը դժվար և բազմերանգ գործընթաց է և իր արմատներով գնում է դեպի վաղ անցյալ: Շատ մանրամասներ, ցավոք սրտի, մեզ չեն հասել, և մենք ստիպված ենք լինում կանխագուշակել, թե ինչպիսին էր կրկեսը մարդկության պատմության տարբեր շրջաններում: Սակայն մի բան պարզ է. հնագույն ժամանակներից առ այսօր կրկեսային արվեստը մեծ սեր և համբավ է վայելում տարբեր քաղաքներում բնակվող մշակութասեր հանրության լայն շրջանակներում: Բացառություն չէ նաև Երևանը: Կրկեսային արվեստի առկայությունը տեսնում ենք տարբեր հայաբնակ քաղաքներում: Հայ կրկեսի նորագույն պատմության սկիզբ պայմանականորեն կարելի է համարել 1846 թվականին Պոլսում կազմակերպված հայկական առաջին պրոֆեսիոնալ խումբի՝ «Արամյան թատրոնի» ստեղծումը, որը գործում է մոտ քսան տարի՝ մինչև 1866 թվականը: «Արամյան թատրոնի» կազմալուծումից հետո մինչև XX դարի սկիզբ հայ մամուլում այլևս չենք հանդիպում վկայություններ կրկեսային ներկայացումների մասին, ինչը սակայն չի նշանակում, որ կրկեսային խմբերը չեն այցելել հայաբնակ քաղաքներ, մասնավորապես Երևան: Հողվածի նպատակն է հայ մամուլի ուսումնասիրությամբ ցույց տալ, որ կրկեսային արվեստը XX դարասկզբի Երևանի մշակութային կյանքում ունեցել է իր ուրույն տեղը և հող է նախապատրաստել կրկեսային արվեստի հետագա զարգացման համար:

Բանալի քառեր՝ կրկես, Երևան, հայկական կրկես, կրկեսի շենք, Երևանյան կրկես, Էլեկտրո-թատրոններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIX դարում Երևանում տեղի ունեցած ցուցադրությունների մասին գրեթե ոչինչ հայտնի չէ: Պատմական աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ են պահպանվել այս շրջանում տեղի ունեցած որևէ կրկեսային ներկայացման մասին: Բնականաբար, սա չի նշանակում, որ Երևանում կրկեսային ցուցադրություններ չեն եղել: Բավական է հիշել հայ նկարիչ Էդուարդ Կարայանի «Երևան, 1920» կտավը (1942թ.), որտեղ պատկերված է քաղաքային տոնախմբության տեսարան, իսկ կտավի կենտրոնում տեսնում ենք մի քանի մետր բարձրության վրա քայլող լարախաղացին՝ կրկեսային ծաղրածուի զգեստներով և ձեռքին երկար ձող: Հայտնի է, որ տոնական օրերին լարախաղացները պարան էին ձգում քաղաքի կենտրոնական հրապարակում և փողոցներում և այլ մարդաշատ վայրերում: Ելույթից հետո ոտնացուպերով փահլևանը (լարախաղացը) շրջում էր երևանցիների տներով և հավաքում ներկայացումը դիտելու վարձը: Իհարկե, Երևանը չի եղել այնպիսի մշակութային և քաղաքական կենտրոն, ինչպիսին հանդիսանում է այսօր, սակայն վստահաբար երևանյան հանդիսատեսը ժամանակ առ ժամանակ ստացել է հնարավորություն վայելելու տաղանդաշատ կրկեսային արտիստների ելույթները, ինչը նաև փաստում է պատմագրական աղբյուրների ուսումնասիրությունը: Արդեն XX դարի սկզբին մամուլում հայտնվում են Երևանում կրկեսային արվեստի և ներկայացումների առկայությունը հաստատող տեղեկություններ: Սույն հոդվածի նպատակն է այս տեղեկությունների ուսումնասիրության և վերլուծության շնորհիվ որոշակիորեն հասկանալ, թե կրկեսային արվեստի ինչպիսի դրսևորումներ էին առկա դարասկզբի երևանյան մշակութային կյանքում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Պատմական աղբյուրների ուսումնասիրությունից տեղեկանում ենք այն մասին, որ Երևան է ժամանել Օսմանյան Կայսրությունում մեծ համբավ վայելող «Արամյան թատրոնը»: Ինչպես արդեն նշվել է, մինչև 1850-ական թվականների վերջը սա միակ թատրոնն է եղել Մերձավոր Արևելքում (Հովհաննիսյան, 2010), ուստի արամյանցիների ժամանումը Երևան պետք է որ մեծ իրադարձություն լիներ քաղաքի մշակութային կյանքում: «Արամյան թատրոնի» Երևանում հանդես գալու վրա մեծապես ազդել է թատրոնի կենսագրության մեջ մի ողբերգական դրվագ: 1849 թվականին Պոլսում

գտնվող արամյանցիների թատրոնի շենքը հրդեհվում է: Երևանցի վաճառական Հակոբ աղայի առաջարկով և մեծ ֆինանսավորմամբ «Արամյան թատրոնը» տեղափոխվում է Թիֆլիս: Այստեղ Հակոբ աղան կառուցում է մոտ հազար հանդիսատես տեղավորող շենք՝ յոթանասուներկու օթյակների երկհարկանի շարքով, բեմով և ասպարեզով (մանեժ): Թատրոնը եղել է փայտաշեն, օթյակները թավշապատ (Հովհաննիսյան, 2010): Թիֆլիսում հաստատվելով «Արամյան թատրոնը» հնարավորություն է ստանում շրջագայություններ կազմակերպել նաև Արևելյան Հայաստանի տարածքում: Մինչ այդ Հովհաննես Գասպարյանի գլխավորած խումբը ներկայացումներով հանդես է գալիս Փոթիում, Քութայիսիում, Գորիում, Մծխեթում: Հաջորդ տարի՝ 1850 թվականին թատրոնը ժամանում է Հայաստան, հասնում է Էջմիածին, ապա Երևան (Հովհաննիսյան, 2010): Երևան քաղաքում, թատրոնի շենքի համար նրանց տեղ են հատկացրել «Ցախի մեյդան» կոչված թաղամասում, որը գտնվել է Երևանի Բերդի փողոցի (ներկայիս «Արարատ» զինու զործարանի դիմաց) ընդարձակ հատվածում՝ հրապարակ, որտեղ հավաքվել են փայտահատները՝ ցախ վաճառել կամ վարձով ձմեռվա փայտ կտորել, որի պատճառով էլ ստացել է «Ցախի մեյդան» անվանումը (Շահվալադյան, 2020): «Արամյան թատրոնի» դերասանները, ցավոք, շատ ժամանակ էին անցկացնում զվարճանքի և ուրախության վրա, ինչը վարկաբեկում էր թատրոնի համբավը: 1851 թվականին «Արամյան» թատերախումբը հեռացել է Թիֆլիսից գրեթե կազմալուծված (Հովհաննիսյան, 2010): Այսքանով պետք է կարծել, որ «Արամյան թատրոնի» գործունեությունը ավարտվել է Արևելյան Հայաստանի տարածքում, մասնավորապես Երևան քաղաքում: Ըստ երևույթին, վերադառնալով Պոլիս, Հովհաննես Գասպարյանը վերակազմավորել է թատրոնը, որտեղ ցուցադրվել են գերազանցապես կրկեսային ներկայացումներ, ինչով էլ բացատրվում է XIX դարի 50-60-ական թվականների հայ մամուլում արամյանցիների մասին լռության փաստը:

«Արամյան թատրոնի» Երևանում հանդես գալուց հետո ընկած ժամանակաշրջանում այլևս կրկեսային ներկայացումների մասին որևէ հիշատակումներ չենք գտնում: Սակայն կարծել, որ այս շրջանում չեն եղել որևէ կրկեսային ներկայացումներ սխալ կլինի, քանի որ կրկեսը, ինչպես արդեն նշեցինք, միշտ եղել է ժողովրդական կյանքի անբաժան մասը: Երևանում կրկեսի շենք կառուցելու մասին հիշատակումներ գտնում ենք արդեն XX դարի սկզբին: Այն փաստը,

որ արդեն XX դարի սկզբում կրկես կառուցելու հստակ նախաձեռնության ենք հանդիպում խոսում է այն մասին, որ Երևանյան հանդիսատեսը ոչ միայն ծանոթ էր կրկեսային արվեստին, այլև կրկեսային արվեստը մեծ սեր էր վայելում Երևանցիների շրջանում: Բերենք սա հավաստող մի քանի փաստեր: Երևանում կրկես ստեղծելու առաջին նախաձեռնությունը 1910 թվականի օգոստոսի 28-ին էր: Այս մասին կարդում ենք ՀԽՍՀ պատմության պետական կենտրոնական արխիվի աշխատակից Ռ.Նահատակյանի «Առաջին կրկեսը» հոդվածում. «Կրկեսի կառավարիչ ոմն Պ.Մ.Եսիկովսկի, հավանաբար լեհ, ինդրագիր է հղում Երևանի նահանգային վարչության շինարարական բաժանմունքին՝ արդեն կառուցված ժամանակավոր կրկեսի շենքի նախագիծը հաստատելու համար: Դրանից հետո այդ հարցի շուրջ գրագրություն է ծավալվում Երևանի քաղաքապետի, նահանգապետի, ոստիկանապետի և նահանգային վարչության շինարարական բաժանմունքի միջև: Ըստ կարգի հարցը դրականորեն լուծելու համար պահանջվում էր վճարել համապատասխան դրոշմատուրք: Այդ իսկ նկատառումով էլ շինանարական բաժանմունքը սեպտեմբերի 4-ին դիմում է Երևանի ոստիկանապետին, հայտելով, որ նախկինում գանձված դրոշմատուրքին պետք է ավելացնել նորը: Նույն օրը Երևանի քաղաքագլուխը տեղեկացնում է նահանգապետին, որ քաղաքային վարչությունը շենքի կառուցման համար դժվարություններ չի հարուցում: Ավելին դա բխում էր քաղաքի շահերից: Դրա համար էլ կրկեսի շենքի կառուցման համար Բազարնայա հրապարակում¹ հատկացվում է 300 քառակուսի սաժեն տարածություն, որն արժեր 300 ռուբլի: Դրամական առումով դա ձեռնտու գործ էր, որովհետև Եսիկովսկին արդեն վարչության դրամարկղ էր մուծել առաջին ամսվա վարձը: Որոշ ժամանակ անց, սեպտեմբերի 15-ին, Երևանի ոստիկանապետը քաղաքային վարչությանն է ներկայացնում լրացուցիչ գանձված տուրքի դրոշմանիշները, իսկ 5 օր հետո քաղաքապետին առաջարկում է ստեղծել հանձնաժողով: Վերջինս պետք է դիտարկեր շինությունը և վճռեր նախագծի բախտը: Գրությունների շղթան շարունակվում է:

¹ Բազարնայա հրապարակը գտնվում էր Երևանի այժմյան քաղաքապետարանի մոտ՝ ներկայիս Խորենացի փողոցում: Հայտնի է, որ 1906 թվականին Բազարնայա 16 հասցեում հայ տաղանդաշատ ճարտարապետ Բորիս Մեհրաբյանի նախագծով կառուցվել է քաղաքապետարանի նոր շենք: Կարծում ենք, որ այն փաստը, որ արդեն 1910 թվականին քննարկվել է Երևանի քաղաքապետարանի հարևանությամբ կրկեսի շենքի կառուցման նախագիծը ցայտուն ապացույց է, որ կրկեսային արվեստը XX դարի երևանյան մշակութային կյանքի անբաժանելի մաս է կազմել:

Մեպտեմբերի 21-ին Երևանի նահանգապետը դիմում է նահանգային ճարտարապետ Միրզոյանին, որպեսզի նա զննի շենքը և պահանջվող ակտը ուղարկի պահանջվող բաժանմունք: Ճարտարապետը, հետևելով ցուցումին, ուսումնասիրում է կառույցը և հանգում է այն եզրակացության, որ չնայած նախագծի որոշ թերություններին, այնուամենայնիվ շենքը ամուր և հաստատուն է, ապահովված հրդեհից: Հոկտեմբերի 5-ին, շինարարական բաժանմունքը գրություն է առաքում Երևանի ոստիկանապետին, ուր շարադրում է իր նկատառումները: Բանն այն է, որ ըստ 1900 թվականի շինարարական կանոնադրության 161-րդ համարի, հանրային օգտագործման համար նախատեսված յուրաքանչյուր շինություն կարելի է կառուցել միայն այն դեպքում, երբ նախագծերը հաստատվում են նահանգային շինարարական վարչության, իսկ որոշ դեպքերում էլ՝ ներքին գործերի մինիստրության տեխնիկաշինարարական կոմիտեի կողմից: Մինչդեռ Եսիկովսկին կրկեսի շենքը կառուցել-ավարտել էր առանց այդ հաստատման» (Նահատակյան, 1985): Այս տեղեկությունները չնայած ծավալուն չեն, սակայն մեզ հուշում են, որ արդեն 1910 թվականի Երևանում արդիական էր դարձել ստացիոնար կրկեսի ստեղծումը, ինչը ցույց է տալիս երևանցիների հետաքրքրությունը կրկեսային արվեստի հանդեպ: Պետք է նաև ենթադրել, որ չնայած քաղաքային իշխանությունների կողմից պաշտոնական թույլտվություն չի եղել, սակայն մեծ հավանականությամբ այս կրկեսում ցուցադրել են ներկայացումներ, որոնց մասին ցավոք տեղեկություններ չունենք: Հետաքրքրական է, որ հենց այս նույն տեղում՝ Բազարնայա հրապարակում, մի քանի տարի անց իր գործունեությունն է ծավալում իտալական «Циркъ Джунгини» (Ջունտինիի կրկես) շրջիկ կրկեսը, որի մասին հետաքրքիր տեղեկություններ ենք քաղում այդ ժամանակվա Երևանում տպագրվող թերթերից մեկից: Այսպես, «Эриванскія объявленія» թերթի 1913 թվականի հոկտեմբերի 5-ի համարում հանդիպում ենք «Циркъ Джунгини» վերնագրով հոդվածի, որտեղ կարդում ենք հետևյալ տողերը. «Մոտ օրերս Էրիվանում կկայանա իտալական Ջունտինիի կրկեսի բացումը, որի կազմում սկզբնական օրերին հանդես կգան 25 արտիստներ: Ծրագրի համարներից առավել հետաքրքիր են կրկեսի տնօրեն պ.Ջունտինիի բարձրագույն կենդավարժության վարժեցված ձիերն են (թվով 7) և ակրոբատներ Օրլանդո եղբայրները: Հետագայում տեղի կունենան առաջնակարգ արտիստների դերյուսներ» (Эриванскія объявленія, 1913, N70): Հոդվածից

տեղեկանում ենք նաև, որ կրկեան ունեցել է սեփական նվագախումբ և տեղակայված է եղել Բազարնայա փողոցում (այժմ՝ Խորենացու փողոց)՝ ոստիկանության և քաղաքապետարանի միջև:

Նույն թերթի 1913 թվականի հոկտեմբերի 23-ին լույս տեսած համարում տեղեկանում ենք, որ իտալական Ջունտինիի կրկեսը մեծ համբավ է վայելում երևանցիների շրջանում: Նույն՝ «Циркъ Джуитини» վերնագրով հոդվածում կարդում ենք հետևյալը. «Ներկայումս Էրիվանում շրջագայող Ջունտինիի կրկեսը ակնհայտորեն այցելուների վրա թողնում է լավ տպավորություն, քանի որ բոլոր օրերին կրկեսը բառացիորեն լցված է: Անարդար կլիներ լռել այն մասին, որ (...) ծրագրի շատ համարներ հաջողված չեն: Չի կարելի լռությամբ շրջանցել պ.Ջունտինիի գեղեցիկ ձիավարությունը, Օրլանդո եղբայրների և օրիորդ Էզմերուդի գիմնաստիկական վարժությունները: Շատ լավն են հեծյալներ Էժիցիոն և Անտոնիոն: Տպավորիչ է Կորդինալների ընտանիքը, որոնք կատարում են բրոնզե արձանիկներ համարը: Այնուամենայնիվ ցանկալի կլիներ, որ կրկեսի տնօրինությունը ամեն դեպքում ժամանակ առ ժամանակ փոփոխեր ծրագիրը: Կրկեսը կմնա Երևանում անորոշ ժամանակով» (Эриванскія объявленія, 1913, N75): Սույն հոդվածից պարզ երևում է, որ երևանցիները մեծ խանդավառությամբ էին հաճախում իտալական այս կրկեսը, որը յուրաքանչյուր ներկայացման ժամանակ «բառացիորեն լցված էր»:

Հետաքրքիր տեղեկություններն այսքանով չեն ավարտվում հայ մամուլի էջերում: Այսպես, «Эриванскія объявленія» թերթի հերթական համարներից մեկում հանդիպում ենք Երևան քաղաքի «Գրանդ Իլյուզիոն» էլեկտրո-թատրոնի² շենքում 1913 թվականին ցուցադրվող «Չորս դևեր» («Четыре черта») ակրոբատական համարը: Այն փաստը, որ թերթը անդրադարձ է կատարում այս հանգամանքին, ապացույցն է նրա, որ կրկեսային ելույթը մեծ համբավ է վայելել 1910-ական թվականների Երևան քաղաքում: Այսպես է պատմում հոդվածի հեղինակը ակրոբատների մասին. «Այն հիշեցնում է Ֆ.Սոլոգուբի աշխատության³ «չորս դևերին»: Երևում է, որ այս «չորս

² 1910 թ.-ին Երևանում գործում էր երկու «էլեկտրոթիոգրաֆ», այսպես էին XX դարի սկզբում կոչվում կինոթատրոնները: Դրանցից առաջինը՝ «Հին թատրոնի Իլյուզիոն» էր (կամ «Գրանդ Իլյուզիոն»)՝ ոստիկանական բակում, երկրորդը՝ «Ապոլլոն», որը տեղակայված էր Բուլվարի (այժմյան՝ Երևանի 2750-ամյակի պուրակ) սկզբնամասում: Այս կինոթատրոններն ունեին իրենց երգչախմբերը, որոնք նվագակցում էին համբ ֆիլմերին:

³ Խոսքը՝ Ֆեոդոր Սոլոգուբի (1863-1927թթ) «Չնչին սատանա» («Мелкий бес», 1905թ) վեպի մասին է:

ղևերը» դեն են նետել ողջ մարդկայինը և դիվական անհասանելիությամբ հաղթահարում են ակրոբատական արվեստի բոլոր դժվարությունները և նրբությունները: Այստեղ սերտ միավորված են ճարպկությունը, անսովոր ճկունությունը և մկանների ուժը: Հանրությունը մեծ սիրով հաճախում է թատրոն» (Эриванскія обявления, 1913, N54): Հաշվի առնելով այն փաստը, որ նույն հոդվածում ընգծվում է Երևանում մշակութային կյանքի սակավությունը, վստահաբար կարելի է ասել, որ կրկեսային այս իրադարձությունը ամենևին փոքր տեղ չի զբաղեցրել այս ժամանակաշրջանի Երևանի կյանքում, որի համար էլ հոդվածագիրն իր երախտագիտությունն է հայտնում «Գրանդ Իլյուզիոն» էլեկտրո-թատրոնի տնօրինությանը, որը «ձգտում է հանրությանը տալ ոչ թանկ և հաճելի զվարճանք» (Эриванскія обявления, 1913, N54): Այլ հետաքրքիր փաստի ենք հանդիպում նույն «Эриванскія обявления» թերթի 1910 թվականի դեկտեմբերի 14-ի համարում: Այսպես, ըստ թերթում ընդգրկված գովազդի Երևանում հյուրախաղերով հանդես են գալու «միջազգային ճանաչում ունեցող պալատական արտիստներ Պրիտել-Ֆայ (գույզը)»: Թերթում այս անօրինակ փորձերը նկարագրվում են այսպես. «Անհավանական սեանսներ: Կցուցադրվեն նոր փորձեր անիմանալի օրացուցային կոմբինացիաներ վերջին 60 տարիների միջակայքում սկսած 1850 թվականից մինչև 1910 թվականը: Պարոնայք Պրիտել-Ֆայը առաջարկում են հանդիսատեսին իրենց հետ բերել օրացույցեր՝ ինչպես արտասահմանյան, այնպես էլ ռուսական: Այս անհավանական փորձը առաջացնում է ահռելի ֆուրոր և վայելում է մեծ հաջողություն Եվրոպայի մայրաքաղաքներում» (Эриванскія обявления, 1910, N92): Այստեղ խոսքը ըստ երևույթին գնում է աճպարարական այն հնարանքի մասին, երբ հանդիսատեսը նշված տարեթվերի միջակայքում ամսաթիվ է ասում, իսկ արտիստը գուշակում է օրինակ շաբաթվա օրը: Համադրելով սա թերթում զետեղված գովազդի մնացած մասի հետ կարող ենք հաստատապես ասել, թե կրկեսային ինչ ժանրի մասին է խոսքը: Այսպես, թերթում կարդում ենք. «Տիկին Պրիտել-Ֆայը բեմի վրա կապած աչքերով գուշակում է այն առարկաների անվանումները, որոնք հանդիսատեսը տալիս է պարոն Պրիտելին, ինչպես օրինակ՝ ժամացույց, շղթաներ, մատանիներ, դանակներ, բանալիներ, բոլոր երկրների մետաղադրամներ և փոստային նամականիշներ: Տիկին Ֆայը գուշակում է խաղաքարտերի, այցեքարտերի անվանումները, նամակների հասցեները, 12-15

թվանշաններով թվեր: Եվ այս ամենը տեղի է ունենում անհավանական արագությամբ և անսխալական ճշտությամբ, այնպես որ հանդիսատեսն ամբողջ ընթացքում կլանված է ցուցադրությամբ» (Эриванскія объявленія, 1910, N92): Այսպիսով, կարելի է հաստատապես փաստել, որ այստեղ խոսքը գնում է աճպարարական արվեստի ենթաձյուղ հանդիսացող մենտալիզմի մասին: Նույն թերթի հաջորդ՝ դեկտեմբերի 17-ի համարում ավելի մանրամասներ ենք իմանում աճպարարական այս գույգի մասին: Այսպես, թերթում կարդում ենք՝ «Վերջին երկու հյուրախաղերը հանրահայտ պալատական Պրիտել-Ֆայ արտիստների, որոնք արժանացել են ներկայացումներ տալ Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ի, Վյուրտենբերգի, Սաքսոնիայի և Ռումինիայի արքաների, Վյուրտենբերգի իշխանուհի, Մեծ Իշխանուհի Վերա Կոնստանտինովնայի, գրաֆ Լև Տոլստոյի ներկայությամբ» (Эриванскія объявленія, 1910, N92): Այն փաստը, որ 1910 թվականի Երևանում հյուրախաղերով ժամանել են Եվրոպայում և Ռուսաստանում մեծ հաջողություններ ունեցող արտիստների գույգ ինքնին խոսում է այն մասին, որ հայ հանդիսատեսը մեծ հետաքրքրություն էր տածում կրկեսային տարատեսակ ժանրերի հանդեպ և Երևանն ամենին անտեսված քաղաք չէր Ռուսական Կայսրությունում հանդես եկող արտասահմանյան արտիստների կողմից: Թերթի նույն համարում մեկ այլ հետաքրքրական փաստ ենք կարդում. «Պրիտել-Ֆայը ելույթ է ունենում աշխարհում առաջին շան հետ, որը կռահում է մարդկային մտքերը: Ռուսի շունը (собака России) լուծում է դժվարագույն թվաբանական խնդիրներ, գուշակում է ամբողջ ռուսական այբուբենը, գուշակում է հանդիսատեսի կողմից մտապահած խաղաքարտերը, գուշակում է վերջին 60 տարիների ընթացքում հանդիսատեսի մտապահած ամսաթվերը, գուշակում և բերում է աշխարհի բոլոր երկրների դրոշները և զինանշանները» (Эриванскія объявленія, 1910, N92): Դժվար է ասել, թե ինչպես է ընթացել այս ներկայացումները, բայց այստեղ կարող ենք նշմարել կենդանավարժության և աճպարարության համադրություն, ինչը նույնպես հետաքրքրական է և, ի դեպ, այսօր գրեթե չհանդիպող մի ժանր: Նշենք նաև, որ ներկայացումը տեղի էր ունենում Երևանում գործող «Ապոլլո» էլեկտրո-թատրոնի բեմում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նկատում ենք, որ Երևանում գործող երկու էլեկտրո-թատրոնների՝ «Գրանդ Իլյուզիոնի» և «Ապոլլոյի» բեմերում հրավիրվել և ցուցադրվել են հստակ կրկեսային արվեստի տարրեր ունեցող ելույթներ և ներկայացումներ, ինչը գուցե խոսում է այս երկու թատրոնների միջև ունեցող ձեռնարկատիրական մրցակցության մասին, ինչպես նաև վկայում է այն, որ այս էլեկտրո-թատրոնները հանդիսական ներգրավելու համար հրավիրում էին կրկեսային արտիստների, ինչը բնականաբար Երևանում կրկեսային արվեստի հանդեպ ունեցած մեծ հետաքրքրության ևս մեկ ցուցիչ է: Մինչև 1928 թվականը Երևանում կրկեսային ներկայացումները ցուցադրվում էին ժամանակավոր շինություններում: Իրենց ներկայացումները հայ հանդիսատեսի դատին էին հանձնում հյուրախաղերով Երևան ժամանող Պերվիլի, Գողֆրուայի, Յուպատովի, Եսիկովսկու և այլ կրկեսախմբեր: Կրկեսի առաջին ստացիոնար շենքը կառուցել է Յա. Կուդրյավցևը 1928 թվականին: Դա 2000 նստատեղ ունեցող փայտե շենք էր: Ավելի ուշ այդ կրկեսն անցավ ՀԽՍՀ Լուսժողկոմարտի, իսկ այնուհետև՝ քաղխորհրդի և Պետական կրկեսների կենտրոնական վարչության տնօրինության տակ: 1940 թվականին այդ շենքը քանդեցին և նույն տեղում սկսեցին կառուցել նորը, որի շինարարությունը ավարտին չհասցվեց Հայրենական մեծ պատերազմի սկսվելու պատճառով, բայց յուրաքանչյուր ժամանակաշրջանում այդտեղ ներկայացումներ էին տեղի ունենում ժամանակավորապես հարմարեցված շինություններում: 1962 թվականի փետրվարի 29-ին տեղի ունեցավ նոր քառահարկ շենքի բացումը, որը երեսպատված էր վարդագույն տուֆով: Այն ուներ 1700 նստատեղ և տեխնիկապես հագեցված էր (ճարտարապետներ՝ Կ.Վարդանյան և Վ.Բելուբեկյան) (Պետրոսյան, 2017): Այս շենքում հիսուն տարի շարունակ ցուցադրվեցին կրկեսային ներկայացումներ և կրթվեցին կրկեսային արտիստների մի քանի սերունդներ: Շենքը հայ խորհրդային ճարտարապետության և մշակույթի հրաշալի կոթող էր: Երկար տարիների ընթացքում կրկեսի շենքը հնացել էր և արդեն չէր համապատասխանում կրկեսային արդի չափորոշիչներին: Ուստի որոշում կայացվեց կառուցել նոր շենք: 2012 թվականի սեպտեմբերի 8-ին Երևանյան կրկեսի հին շենքը՝ ծառայելով ուղիղ հիսուն տարի, պայթեցվում է, և սկսվում է նոր շենքի շինարարությունը: 2025 թվականի հոկտեմբերին վերաբացվեց միջազգային բոլոր ստանդարտներին համապատասխան

Երևանի կրկեսի շենքը, որտեղ հնարավոր կլինի բեմադրել ցանկացած տիպի կրկեսային և էստրադային ներկայացումներ: Այն ունի ավելի քան 2000 նստատեղ: Կրկեսի նոր շենքով մեծապես կլիթանվի հայ կրկեսային արվեստի զարգացումը և կրկեսային արվեստը նորից կուրախացնի Երևանի կրկեսասեր հանդիսատեսին:

XX դարի սկզբին կրկեսային արվեստի մուտքը Երևանի մշակութային տարածք քաղաքի գեղարվեստական կյանքի զարգացման բնական փուլ է ներկայացնում: Այս գործընթացը պայմանավորված էր ինչպես սոցիալ-տնտեսական փոփոխություններով, այնպես էլ զանգվածային զվարճանքի ձևերի նկատմամբ հայ հանրության հետաքրքրության ընդհանուր աճով: Կրկեսը, որը սկզբում հանդես էր գալիս շրջիկ թատերախմբերի և ժամանակավոր ասպարեզների տեսքով, աստիճանաբար կայուն տեղ գրավեց քաղաքի մշակութային կյանքում՝ դառնալով հանրային ժամանցի և, ինչու ոչ, գեղարվեստական փորձարկումների կենտրոններից մեկը: Նույնիսկ սակավ արխիվային նյութերի ուսումնասիրությունը բավական է եզրակացնելու համար, որ արդեն XIX վերջում և XX դարի սկզբում կրկեսային արվեստը հայ մշակութային կյանքի անբաժան մասն էր կազմում: Երևանցիները մեծ սիրով հաճախում էին արտասահմանից ժամանող կրկեսային խմբերի, ինչպես նաև տեղական կրկեսային արտիստների ներկայացումներին: Եվ ով գիտի, գուցե հենց այս ներկայացումներն են իրենց մանկության և պատանեկության տարիներին դիտել հայ կրկեսի ապագա լեգենդներ Վաղարշակ Արզումանյանը (ծնվ. 1900թ.), Արկադի Մագդալանը (ծնվ. 1911թ.), Ռ.Մանուկյանը (ծնվ. 1912թ.), Ստեփան Իսահակյանը (ծնվ. 1919թ.), Ելենա Ավանեսովան (ծնվ. 1922թ) և այլոք, որոնք հետագայում պետք է ստեղծեին հայկական կրկեսային կոլեկտիվը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը կարելի է հաստատապես ասել, որ կրկեսային արվեստը, XX դարի սկզբին մուտք գործելով Երևանի մշակութային կյանք, նշանակալի դեր է խաղացել քաղաքի մշակութային միջավայրի ձևավորման գործում և դարձավ կարևորագույն գործոն Հայաստանում պրոֆեսիոնալ կրկեսի զարգացման գործում: Կարելի է վստահորեն ասել, որ այս պատմական ժամանակաշրջանը որոշեց ազգային կրկեսային դպրոցի հետագա զարգացման ուղղությունը՝ դնելով նրա գեղարվեստական լեզվի և գեղագիտական սկզբունքների հիմքերը, ինչպես նաև հող նախապատրաստեց հայկական կրկեսային կոլեկտիվի ստեղծման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Հովհաննիսյան Հ. Վ. (2010). Հայ թատրոնի պատմություն, 19-րդ դար (պատ. խմբագիր՝ Հարությունյան Բ.Բ., ԳԱԱ Արվեստի ինստիտուտ), Երևան, «Նաիրի».
- Շահվալադյան Ն. (2010). Կրկեսի մուտքը Երևան. «Թատերակետեր» թատերագիտական կայք, <https://theatricalpoints.com/hy/171>
- Պետրոսյան Ս. (2017). Հայկական կրկեսը, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն
- Նահատակյան Ռ. (1985) *Առաջին կրկեսը. Երեկոյան Երևան օրաթերթ*, 20(8485).
- Эриванскія аб'явлення* (16.XII.1910), N 92.
- Эриванскія аб'явлення* (27.VII.1913), N 54.
- Эриванскія аб'явлення* (23.X.1913), N75.
- Эриванскія аб'явлення* (5.X.1913) 1913թ, N70.

REFERENCE LIST

- Ovannisyan Kh. V. (2010). Istoriya armyanskogo teatra (*The History of Armenian Theatre*). XIX vek (otvetstvennyy redaktor — Arutyunyan B. B., Institut iskusstv NAN RA). Yerevan: «Nairi».
- Shakhvaladyan N. (2010). Vkhod tsirka v Yerevan (*Introduction of Circuse in Yerevan*). teatrovedcheskiy sayt «Teatral'nyye tochki». <https://theatricalpoints.com/hy/171>
- Petrosyan S. (2017). Armyanskiy tsirk (*Armenian circus*). Yerevan: izdatel'stvo «Tigran Mets».
- Nakhatakyan R. (1985, 23 sentyabrya). Pervyy tsirk (*The First Circus*). gazeta «Vecherniy Yerevan», 20(8485).
- Eri vanskiya ob"yavleniya* (*Yerevan Announcement*). (16.XII.1910), No. 92.
- Eri vanskiya ob"yavleniya* (*Yerevan Announcement*). (27.VII.1913), No. 54.
- Eri vanskiya ob"yavleniya* (*Yerevan Announcement*). (23.X.1913), No. 75.
- Eri vanskiya ob"yavleniya* (*Yerevan Announcement*). (5.X.1913), 1913, No. 70.

РЕЗЮМЕ

ВЪЕЗД ЦИРКА В ЕРЕВАН В НАЧАЛЕ XX ВЕКА

Грач Петросян

История цирка и формирование циркового искусства - сложный и многогранный процесс, корни которого уходят в глубокую древность. К сожалению, многие подробности не дошли до нас, и нам приходится лишь догадываться, каким был цирк в разные периоды истории человечества. Однако ясно одно: с древнейших времён и до наших дней цирковое искусство пользуется огромной любовью и известностью среди широкого круга ценителей культуры, проживающих в разных городах.

Ереван не является исключением. Мы видим присутствие циркового искусства в различных городах с армянским населением. Началом современной истории армянского цирка можно условно считать создание первой армянской профессиональной труппы - «Арамян татрон» (театр Арамян), организованной в Константинополе в 1846 году и просуществовавшей около двадцати лет, до 1866 года. После роспуска «Арамян татрона» и вплоть до начала XX века мы больше не встречаем свидетельств о цирковых выступлениях в армянской прессе, что, однако, не означает, что цирковые труппы не посещали города с армянские города, в частности Ереван.

Цель статьи - показать посредством исследования армянской прессы, что цирковое искусство занимало свое уникальное место в культурной жизни Еревана начала XX века и подготовило почву для дальнейшего развития циркового искусства.

Ключевые слова: цирк, Ереван, Армянский цирк, здание цирка, Ереванский цирк, электротeatры.

SUMMARY

THE ENTRANCE OF CIRCUS TO YEREVAN AT THE BEGINNING OF THE 20TH CENTURY

Hrach Petrosyan

The history of the circus and the development of circus art is a complex and multifaceted process, with roots reaching back to ancient times. Unfortunately, many details have not reached us, and we can only guess at what the circus was like at different periods in

human history. However, one thing is clear: from ancient times to the present day, circus art has enjoyed immense love and renown among a wide range of cultural enthusiasts living in various cities. Yerevan is no exception. We see the presence of circus arts in various cities with Armenian population. The beginning of the modern history of the Armenian circus can be considered the foundation of the first Armenian professional troupe, the "Aramyan Tatron" (Theater Aramyan), organized in Constantinople in 1846 and existing for about twenty years, until 1866. After the dissolution of the Aramyan Tatron and until the beginning of the 20th century, we no longer find evidence of circus performances in the Armenian press, which, however, does not mean that circus troupes did not visit Armenian cities, in particular Yerevan. The aim of the article is to show, through a study of the Armenian press, that circus art had its own unique place in the cultural life of Yerevan at the beginning of the 20th century and prepared the ground for the further development of circus art.

Keywords: *circus, Yerevan, Armenian circus, circus building, Yerevan circus, electrotheatres.*

Հոդվածը ստացվել է՝ 22.08. 2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 29.08. 2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 15.10.2025

«ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ («7-Ի ԳՈՐԾ»)». ԱՅԼԱԽՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի պետական համալսարան, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ sh.harutyunyan.edu@gmail.com

DOI: 10.24234/scientific.v3i50.247

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է Խորհրդային Հայաստանի առաջին կազմակերպված այլախոհական կառույցին՝ Հայ երիտասարդական միությանը (ՀԵՄ), որը պատմության մեջ հայտնի է նաև որպես «7 հայրենասերների գործ»: Աշխատանքի մեջ վերլուծվում են ՀԵՄ-ի ձևավորման պատմական, գաղափարական և քաղաքական հիմքերը՝ դիտարկելով այն որպես Խորհրդային Հայաստանում համակարգված այլախոհական պայքարի մեկնարկ:

Հոդվածում ներկայացված են կազմակերպության հիմնադրման ընթացքը, նպատակների ու գործունեության առաջնահերթությունները: ՀԵՄ-ի գործունեությունը գնահատվում է որպես շրջադարձային փուլ Խորհրդային Հայաստանի այլախոհական շարժման պատմության մեջ: Այն իր կառուցվածքով ու գործունեությամբ ոչ միայն ձևավորեց քաղաքական դիմադրության նոր ձևաչափ, այլև խթանեց ազգային ինքնագիտակցության վերածնունդը՝ մեծ դեր ունենալով Խորհրդային Հայաստանում այլախոհական համակարգված պայքարի ձևավորման վրա:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել հայկական այլախոհական շարժման առաջին համակարգված դրսևորումը՝ «Հայ երիտասարդական միության» հիմնադրման և կազմակերպական ձևավորման գործընթացը: Հետազոտությունը իրականացվել է պատմական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ՝ համադրելով փաստաթղթային, արխիվային և բանավոր աղբյուրները: Վերլուծության հիմքում դրվել է պետական ու անձնական արխիվների նյութերի, ինչպես նաև

մասնակիցների հուշագրությունների և հարցազրույցների համակողմանի կոնտենտ վերլուծությունը:

Բանալի բառեր՝ այլախոհություն, ՀԵՄ, հողային պահանջատիրություն, ազգային ինքնագիտակցություն, Հայոց ցեղասպանություն, «7 հայրենասերներ»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1960-ական թվականներին Խորհրդային Միությունում ընթացող ներքաղաքական գործընթացները, որոնք հետագայում պատմագիտության մեջ բնորոշվեցին որպես «Խրուշչովյան հալոցք», ինչպես նաև Սառը պատերազմի միջազգային լարվածության աստիճանական խորացումը, ձևավորեցին բարենպաստ պայմաններ այլախոհական գաղափարական դաշտի ձևավորման համար ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում: Ամբողջատիրական իշխանական համակարգի պայմաններում առաջ եկան նոր տեսակի հասարակական նախաձեռնություններ, որոնք ստացան այլախոհական շարժումների բնույթ՝ գործելով հիմնականում ընդհատակյա կազմակերպությունների ձևաչափով: Նույն ժամանակահատվածում՝ 1960–1980-ական թվականներին, նմանատիպ գործընթացներ արձանագրվեցին նաև Խորհրդային Հայաստանում, որտեղ ձևավորվեցին մի շարք այլախոհական խմբեր և կազմակերպություններ, որոնք ստանձնեցին գաղափարական դիմադրության ու ընդդիմադիր գործունեության կազմակերպման առանցքային դեր:

Խորհրդային Հայաստանում այլախոհական դրսևորումները հիմնականում կենտրոնացած էին ազգային-քաղաքական հիմնախնդիրների շուրջ: Դրանք առնչվում էին հատկապես Հայոց ցեղասպանության ճանաչման և հիշատակի պահպանման խնդրին, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի պատմականորեն հայկական տարածքների վերամիավորման պահանջին, հայոց լեզվի պահպանմանն ու պետական կարգավիճակի ապահովմանը, ինչպես նաև Հայաստանի անկախության վերականգնման և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերին (Հարությունյան Շ., 2024, Այլախոհության գաղափարական...): Այդ գաղափարական ուղղությունները գտնում էին իրենց արտահայտությունն այն գաղտնի խմբերի և կազմակերպությունների ծրագրերում, որոնք ձևավորվում էին Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի ընդհատակյա դաշտում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Հայ երիտասարդական միություն» հիմնադրումը և գործունեությունը

Խորհրդային Հայաստանում քաղաքական այլախոհության գաղափարական հասունացումն ու զարգացումը հանգեցրեց առավել կազմակերպված դրսևորումների հայտ գալուն: ՀԽՍՀ-ում կազմակերպված այլախոհական շարժման առաջին հայտնի օրինակներից մեկը համարվում է 1962 թվականին Երևանում ձևավորված «Հայ երիտասարդական միություն» հայրենասիրական խմբակը (այսուհետ՝ ՀԵՄ) (Հայոց պատմություն, 2016): Դրան միավորված էին հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ՝ ուսանողներ, դասախոսներ և մտավորականներ, որոնք միավորված էին ազգային ինքնության պահպանման գաղափարով: Խմբի գործունեությունը հիմնականում կրում էր տեղային և հայրենասիրական բնույթ՝ առանց բացահայտ հակախորհրդային ուղղվածության: Այն կենտրոնանում էր այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք էին հայոց լեզվի պահպանման անհրաժեշտությունը, Հայոց ցեղասպանության հիշատակի օրերի նշումը և պատմական հայկական տարածքների վերամիավորման գաղափարը (Հարությունյան Շ., 2024, Այլախոհական առաջին...): ՀԵՄ-ի անդամների հանդիպումները և քննարկումները կրել են պարբերական բնույթ: Հայ հայրենասերների հիմնական նպատակն էր ազգային ինքնագիտակցության բարձրացումը և հայ ժողովրդի մեջ ազգայնական ոգու ամրապնդումը: Քննարկումների ժամանակ առանձնակի շեշտադրում էր արվում հայերենը ռուսաց լեզվի ազդեցությունից և աստիճանական միաձուլումից պաշտպանելու անհրաժեշտության վրա: Նմանատիպ գաղափարական հանդիպումների և ազգային հարցերի շուրջ ծավալված քարոզչության արդյունքում շարժմանը աստիճանաբար միացան նոր համախոհներ, և մասնակիցների թիվը հասավ մոտ 15–20 հոգու (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թ. 5): Այդ հանդիպումների ընթացքում, հայ հայրենասերները ցանկացել են իրենց ծավալված գործունեությունն ավելի կազմակերպված հունի մեջ դնել: Հավաքված մարդկանց միջև գործողությունները համակարգելու, իրականացվող աշխատանքները նպատակային ուղղությամբ առաջնորդելու և շարժման գործունեությունը առավել լայն շրջանակներում զարգացնելու նպատակով, հերթական հանդիպումներից մեկի ընթացքում ստեղծվել է ղեկավար մարմին, որը ստացել է «Խորհուրդ» անվանումը: Նորաստեղծ կենտրոնական կառույցի կազմում ընդգրկվել են միության ակտիվ

անդամներ՝ Խաչատուր Ամիրջանյանը, Խաչիկ Սաֆարյանը, Վիգեն Բաբայանը, Գրիգոր Եղյանը, Էդուարդ Կակոպյանը, Կարապետ Քիրամիջյանը և Մերուժան Հովհաննիսյանը, որոնք ստանձնել են կազմակերպչական և գաղափարական աշխատանքների հիմնական պատասխանատվությունը (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թ. 13): Ընդհատակյա կազմակերպության գործունեության բնականոն ընթացքն ապահովելու համար ընդունվել է որոշում՝ ստեղծել նյութական հիմք, որը կձառայեր կազմակերպության ֆինանսական ապահովման նպատակներին: Այդ նպատակով սահմանվել է անդամավճարի հավաքագրման և դրամական միջոցների օգտագործման հստակ կարգ: Անդամավճարներից գոյացած ֆինանսական միջոցները ուղղվում էին մի շարք գործնական խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ հավաքների անցկացման համար վարձված տարածքի վճարմանը, կազմակերպության անդամների տեղափոխության ծախսերին, ինչպես նաև տպագրական սարքավորման անհրաժեշտ մասերի պատրաստմանն ու ձեռքբերմանը (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թ. 5): ՀԵՄ-ի ղեկավարները ցանկացել են տպագրել, բազմացնել և հայ ժողովրդի մեջ տարածել ազգային հայրենասիրական բովանդակություն պարունակող հոդվածներ: Այս խնդիրն իրագործելու համար ձեռք է բերվել մի շարք հոդվածներ, որոնք կրում էին ազգային-հայրենասիրական, մասամբ նաև հակախորհրդային բովանդակություն: Այդպիսիք էին՝ «Բատովսկին իրավացի չէ», «Այսօր Վարիայից ստացա» բառերով սկսվող հոդվածները, որոնք «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածի դեմ գրված հոդվածներ էին: Բացի վերոնշյալ հոդվածներից, հայ այլախոհները գրել և տարածել են «Հայկական դատի 85 տարին», «Հայրենասերների համամիութենական ընկերության հայտարարություն» հոդվածները, «Թանկագին հայրենակիցներ» բառերով սկսվող կոչը, «Կտակ հայ որդուն» պոեմը, «Ի՞նչն է ազգերի միաձուլումը, և ո՞վ է ձգտում նրան», «Ողջուն Կիրովաբադի հայ բարեկամներին», «Տեսություն մարդկային պատմության մասին» խորագրերով հոդվածներ (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թ. 4): Նշված գործունեության հետ մեկտեղ խմբակի անդամները ձգտում էին կապեր հաստատել Խորհրդային Միության սահմաններից դուրս գործող այլախոհական և ազգային-հայրենասիրական շրջանակների հետ: Այդ փորձերի արդյունքում նրանց հաջողվել է արտասահման ուղարկել Վիգեն Բաբայանի «Կտակ հայ որդուն» վերնագրով պոեմը, որը ներկայացնում էր խորապես ազգային և հայրենասիրական գաղափարներ: Պոեմը

հետագայում տպագրվեց սփյուռքահայ մամուլում՝ մասնավորապես «Մփյուռք» շաբաթաթերթում և Փարիզում հրատարակվող դաշնակցական երիտասարդական «Հայաստան» պարբերականում (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թ. 6):

1962 թվականին Խաչատուր Ամիրջանյանը պատրաստել է «Պրոլետարիատի դիկտատուրայի 45 տարին» վերնագրով հոդվածը, որը հաջորդ տարում վերամշակվեց և համալրվեց տասներեք ծրագրային դրույթներով: Նոր խմբագրությամբ նյութը ձեռք բերեց ավելի ընդգծված հակախորհրդային և հայրենասիրական բովանդակություն: Հոդվածում արտահայտված էր խորհրդային իշխանության տապալման և ազգային ինքնիշխանության վերականգնման կոչ: Խ. Ամիրջանյանին վստահված էր նաև կազմակերպության ծրագրի սոցիալական հատվածի ձևավորումը, որը պետք է անդրադառնար հասարակական արդարության, սոցիալական իրավունքների և ազգային ինքնության փոխհարաբերության հիմնահարցերին (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թ. 25): 1963 թ. սկզբին Խաչիկ Սաֆարյանը նախաձեռնում է «Այսօր Վարիայից ստացա» հակախորհրդային բովանդակություն ունեցող հոդվածի բազմացումը և տարածումը: Այս ժամանակափուլում Խ. Սաֆարյանը ձեռք է բերում այլ ազգային-հայրենասիրական բովանդակություն կրող հոդվածներ նույնպես, որոնք բազմացնում և տարածում է տարբեր հայրենասիրական շրջանակներում: Բացի Խորհրդային Հայաստանում ծավալած այլախոհական գործունեությունից՝ Սաֆարյանը գաղափարական աշխատանքներ է իրականացրել Մոսկվայի հայ ուսանողության և մտավորականության շրջանում՝ փորձելով նրանց մեջ ոգեշնչել ազգային-հայրենասիրական տրամադրությունները և ներգրավել այլախոհական շարժումների մեջ (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թ. 26): Այս ամենին զուգահեռ, Վիգեն Բաբայանը, Կարապետ Քիրամիջյանը և Մերուժան Հովհաննիսյանը մեկնել են Ստեփանակերտ՝ իրենց հետ տանելով հոդվածներ և նյութեր, որոնք պարունակում էին հակախորհրդային և ազգային-հայրենասիրական գաղափարական բովանդակություն: Ստեփանակերտում նրանց գործունեության գլխավոր նպատակն էր տեղի հայ բնակչության շրջանում բորբոքել հայրենասիրական տրամադրությունները և նոր մարդկանց ներգրավել ազգային պայքարի գործընթացին (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թթ. 26-27): Բացի ազգային հիմնախնդիրներն արծարծելուց, Մ. Հովհաննիսյանը մշտապես հանդես է եկել Հայաստանի անկախության

վերականգման անհրաժեշտության դիրքերից: Ըստ նրա, պետք է ստեղծվեր անկախ Հայաստան, որտեղ չէին լինի խորհրդային կարգեր (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թթ. 31-33): Նա ակտիվորեն զբաղվել է այդ գաղափարի տարածմամբ և քարոզչությամբ: Անկախության վերականգման համոզմունքն այնքան ամուր է եղել, որ ձերբակալությունից հետո՝ դատավարության ընթացքում, Մ. Հովհաննիսյանը հայտարարել է, որ իր համար ավելի նախընտրելի է, որ Հայաստանը լինի անկախ, որտեղ կլինեն բուրժուա-ազգայնական կարգեր (Հարությունյան Վ., 2022):

1963 թ. դեկտեմբերին ՊԱԿ-ը բացահայտում և ձերբակալում է ՀԵՄ-ի «7-ի խորհրդին»: 1964 թ. օգոստոսի 5-26-ը տեղի ունեցած դատավարության արդյունքում կազմակերպության անդամները մեղավոր են ճանաչվում ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ազդեցիկ և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը): Ազատազրկման են դատապարտվում Վիգեն Բաբայանը (5տարի), Մերուժան Հովհաննիսյանը (5տարի), Խաչատուր Ամիրջանյանը (5տարի), Խաչիկ Սաֆարյանը (4տարի), Գրիգոր Եղյանը (2 տարի), Կարապետ Քիրամիջյանը (2տարի) և Էդուարդ Կակոյանը (1 տարի 6 ամիս) (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 2, թթ. 34-35): 1966 թ. «Ազգային միացյալ կուսակցության» հիմնադիրներից Շահեն Հարությունյանը, որը մինչև վերոնշյալ կազմակերպության հիմնադրումը, ակտիվորեն համագործակցել է ՀԵՄ-ի հետ, իր հուշերում որոշ մանրամասներ է գրել ՀԵՄ անդամների դատավարության մասին. «Դատավարությունը տևեց շուրջ մեկ շաբաթ: Վերջին օրը, երբ կայացավ դատավճիռը, հավաքվածների մոտ սկսվեց մի իրարանցում. մեկը հայեցում էր դրսում կանգնած զինվորական պահակախմբին, մեկը բռնեց էր թափ տալիս և ռուսների հասցեին ինչ-որ բաներ ասում, մեկ ուրիշը վրեժի կոչեր էր անում, միայն բանտարկյալների հարազատներից ոմանք՝ միայն մայրերն էին, որ լաց էին լինում ու «չեկային» անիծում: Մի խոսքով, ամեն կողմից զայրույթի արտահայտություններ էին լսվում» (Շահեն Հարությունյան, անտիպ հուշագրություն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«7 հայրենասերների գործ» կամ «7-ի գործ» անվանումով հայտնի Հայ երիտասարդական միություն ընդհատակյա կազմակերպությունը դարձավ Խորհրդային Հայաստանում առաջին համակարգված այլախոհական շարժումը: Պաշտոնապես կազմակերպությունը կրում էր «Հայ երիտասարդական միություն» անվանումը, սակայն ժամանակակիցների և հետագոտողների վկայությամբ՝ ժողովրդի մեջ այն առավել տարածված և ընդունված էր «7 հայրենասերների» կամ «7-ի գործ» անվանմամբ: Ուսումնասիրելով ՀԵՄ գործունեությունը՝ կարելի է եզրակացնել, որ այն ունեցել է առանցքային դեր Խորհրդային Հայաստանում այլախոհական պայքարի և ազգային-հայրենասիրական գաղափարների տարածման գործում: Հայտնի այլախոհ Պարույր Հայրիկյանը, խոսելով ՀԵՄ-ի մասին, նշել է, որ «7 հայրենասերների» կազմակերպությունը, բարոյահոգեբանական մեծ դեր է կատարել հայ ազգային-ազատագրական պայքարում (Հայրիկյան Պ., 2016): Նրա հիմնադրումն հաղորդեց նոր որակ և մոտեցում այլախոհական շարժման տրամաբանությանը, որոնք հետագայում ավելի են զարգացել և կատարելագործվել՝ ազդելով ինչպես ընդհատակյա պայքարի կառուցվածքի վրա, այնպես էլ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության ամրապնդման գործընթացների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայրիկյան Պ. (2016). *Իմ բանտային յուշերից: Գիրք Ա*. ԱԻՄ հրատ (1965–1973).

Հայաստանի ազգային արխիվ. (Ֆ. 1191, ց. 20, գ. 2). Երևան.

Հայոց Պատմություն (2016). ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ. (2nd ed., Vol. 4).

Հարությունյան Վ. (2022). Քաղաքանտարկյալի պատմություն. Հայկական ուսումնասիրությունների «Անի» հիմնադրամ, Երևան.

Հարությունյան Շ. (2024). Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին. Պատմություն և մշակույթ, 21(1).

Հարությունյան Շ. (2024). Այլախոհության գաղափարական ուղղվածությունները Խորհրդային Հայաստանում 1960–80-ական թթ.-ին. Գիտական տեղեկագիր, 1(46).

Հարությունյան Շ. (թ. ա.). Անտիպ հուշագրություն.

REFERENCE LIST

- Airikyan, P. (2016). *Iz moikh tyuremnykh vospominaniy: Kniga I (From My Prison Memoirs: Book I)*. Izd-vo AIM (1965–1973).
- Natsional'nyy arkhiv Armenii. (f. 1191, op. 20, d. 2). Erevan. (*National Archives of Armenia*).
- Istoriya armyan. (2016). *Institut istorii NAN RA. 2-e izd., T. 4 (History of the Armenians, 2nd ed., Vol. 4)*. Erevan.
- Arutyunyan, V. (2022). *Istoriya politzaklyuchyonnogo (A Political Prisoner's Story)*. Fond "Ani" armyanskikh issledovaniy, Erevan.
- Arutyunyan, Sh. (2024). Vozniknovenie pervykh dissidentskikh organizatsiy i dinamika ideologicheskogo razvitiya v Sovetskoj Armenii v nachale 1960-kh godov (*The Emergence of the First Dissident Organizations and the Dynamics of Ideological Development in Soviet Armenia in the Early 1960s*). *Istoriya i kul'tura*, 21(1).
- Arutyunyan, Sh. (2024). Ideynye napravleniya dissidentstva v Sovetskoj Armenii v 1960–80-e gody (*Ideological Trends of Dissidence in Soviet Armenia in the 1960s–80s*). *Nauchnyy vestnik*, 1(46).
- Arutyunyan, Sh. (b. g.). *Neopublikovannyye memuary (Unpublished Memoirs)*.

РЕЗЮМЕ

«СОЮЗ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ («ДЕЛО СЕМИ ПАТРИОТОВ»): ПЕРВАЯ ДИССИДЕНТСКАЯ ОРГАНИЗАЦИЯ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Шаген Аруткюнян

Статья посвящена первой организованной диссидентской структуре в Советской Армении — Союзу армянской молодежи (САМ), более известному в истории как «Дело семи патриотов». В исследовании анализируются исторические, идеологические и политические предпосылки формирования САМ, рассматривается его деятельность как начало систематической диссидентской борьбы в Советской Армении. В статье представлены процесс создания организации, её цели и приоритетные направления деятельности. Деятельность САМ оценивается как переломный этап в истории диссидентского движения в Армении. По своей структуре и деятельности организация

не только сформировала новый формат политического сопротивления, но и способствовала возрождению национального самосознания, сыграв значительную роль в институционализации диссидентского движения в Советской Армении. Цель данной статьи — исследовать первое организованное проявление армянского диссидентского движения, а именно процесс основания и организационного формирования Союза армянской молодёжи. Исследование проведено с применением исторического и историко-сравнительного методов, в сочетании с анализом документальных, архивных и устных источников. В основу анализа положен всесторонний контент-анализ материалов из государственных и личных архивов, а также мемуаров и интервью участников.

Ключевые слова: диссидентство, Союз армянской молодежи, территориальные претензии, национальное самосознание, Геноцид армян, «семь патриотов».

SUMMARY

"ARMENIAN YOUTH UNION ("THE CASE OF THE SEVEN PATRIOTS")": THE FIRST DISSIDENT ORGANIZATION IN SOVIET ARMENIA

Shahen Harutyunyan

The article is devoted to the first organized dissident structure in Soviet Armenia — the Armenian Youth Union (AYU), also known in history as “The Case of the Seven Patriots.” The study analyzes the historical, ideological, and political foundations of the AYU’s formation, viewing it as the starting point of structured dissident struggle in Soviet Armenia. The article presents the process of the Union’s establishment, its goals, and the main directions of its activity. The AYU’s work is assessed as a turning point in the history of Armenia’s dissident movement. Through its organizational structure and activities, the Union not only shaped a new format of political resistance but also stimulated the revival of national self-consciousness, playing a significant role in the institutionalization of dissident movements in Soviet Armenia. The purpose of the article is to examine the first organized manifestation of the Armenian dissident movement — the establishment and organizational formation of the Armenian Youth Union. The study was conducted through the application of historical and

comparative-historical methods, combining documentary, archival, and oral sources. The analysis is based on a comprehensive content analysis of materials from state and personal archives, as well as memoirs and interviews of participants.

Keywords: *dissidence, Armenian Youth Union (AYU), territorial claims, national self-consciousness, Armenian Genocide, “Seven Patriots”.*

Հոդվածը ստացվել է՝ 15.10. 2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 20.10. 2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 14.11.2025

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵԾԻՐԸ

ՇՈՂԻԿ ՄԵԼԿՈՆՅԱՆ

Երևանի պետական համալսարան, ՀՀ, Երևան

Էլ. փոստ՝ shoghik-melkonyan@mail.ru

DOI: 10.24234/scientific.v3i50.248

Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթոգին,

Ով չի սիրեր պիտի մեռնի առհավետ.

Մերը պե՛տքն է, երազն է կյանքը կյանքին...

Ռ. Սևակ

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռուբեն Սևակը հայ գրականության հզոր անհատականություններից մեկն է՝ բազմարդյուն, միշտ արդիակ, բնաբուխ արժեքների սևակյան չափանիշներով: Սևակի քնարական երկերը օրհներգեր են՝ ձոնված սիրելի էակին, սիրուն, հայրենիքին, իսկ արձակ երկերը գրական մի նոր տեսակի հայտնություններն են՝ խոհափիլիսոփայական և գեղարվեստական լիցքերով համաձուլված: Բանաստեղծի մեջ մշտամնա կերպով ապրում է հայրենիքը, և նրա բոլոր երկերի հիմքում խաղաղ ու ապահով հայրենիքի տեսլականն է՝ անխարդախ բնությամբ ու սիրով, անվրդով ու ամուր ընտանիքով, կյանքում իր տեղն աննկուն կամքով նվաճող, «ապրելը հաղթել է» յուրօրինակ բանաձևով...Եվ այս ամենը գրական տարբեր ձևերում և ժանրային ներթափանցումներով, սևակյան բնաբուխ խոսքի հորդուն գեղումներով: Այսօր էլ Սևակի ինքնաբուխ զրույց սերունդների հետ է՝ համադրված ստեղծագործական տարբեր եղանակներով և խոսքի դրսևորման տարբեր ձևերով: Բոլոր դեպքերում էլ ասելիքի էությունը նույնն է՝ կատարյալի ձգտումը, ինչն էլ հիմք է հանդիսանում ստեղծագործական մի ներդաշնակ ամբողջության:

Բանալի քառեր՝ գրական տարբեր ժանրեր ու տեսակներ, գեղարվեստական պատկեր, ժանրային ամբողջականություն, սիրերգություն, քնարական, ներաշխարհ, հայրենիք, պատմողական:

ՆՇՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Սևակի՝ որպես ստեղծագործողի տաղանդն ինքնորոշվել է գրական տարբեր ժանրերի ու տեսակների խաչմերուկներում՝ քնարական (բանաստեղծություն, պոեմ), պատմողական (նորավեպ, պատմվածք, զրույց, էսսե, նամակ) և այլն: Գեղարվեստական արժեքայնության անընդհատ նորոգվող յուրատիպությամբ է բնութագրվում Ռուբեն Սևակի ստեղծագործությունը՝ միաժամանակ անխախտ պահելով նաև ժանրային ներթափանցումները: Այս ամենով հանդերձ, Ռ. Սևակի ստեղծագործությունը ներփակում է էջեր, որոնք իրենց գաղափարական, փիլիսոփայական բովանդակությամբ, գեղարվեստական արժանիքներով ու ընդհանրացումներով, հոգեբանական խորությամբ և խոսքի ինքնատիպ լիցքերով միանգամայն ուրույն տեղ են գրավում հայ գրականության պատմության մեջ:

Սևակի առաջին բանաստեղծությունը՝ «Բաժանման խոսքեր» վերնագրով, տպագրվել է 1905 թվականին «Մասիս» հանդեսում: Ռ. Սևակը, իր 1-ին ստեղծագործությունից սկսած, ապա և ստեղծագործելով գրական տարբեր տեսակներով, յուրօրինակ պուժենների և խոհերի միջոցով բանաստեղծի ու արձակագրի անմիջական տեսունակությամբ կապակցում ու ներհյուսում է գեղարվեստական փաստի իրական, հոգեբանական ու փիլիսոփայական հավանականությունները՝ գեղարվեստական պատկերին հաղորդելով ճանաչողական յուրատիպ արժեք: Ռ. Սևակի ստեղծագործություններն ունեն ներքին միասնություն և նրանց կառուցվածքն ու հոգեբանական երևույթը ճանաչելու դիտանկյունից կարևոր ու ելակետային նշանակություն ունի ժամանակի ըմբռնումը: Բնությունը տրամադրող է ու հմայիչ, մարդու հոգին ազատ է կաշկանդումներից, և զգացմունքները դառնում են մեղմ, նուրբ ու մտերմիկ:

Հողվածում գրականագիտական վերլուծություններն իրականացրել ենք՝ հենվելով Սևակի չափածո և արձակ ստեղծագործությունների վրա, միաժամանակ հենք ընդունելով ժամանակակից գրականագիտության մոտեցումներն ու ընկալումները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ելնելով հոգվածի հիմնական առաջադրույթներից՝ բանաստեղծի ստեղծագործությունների քննաբանության համար ընտրել ենք նկարագրական, վերլուծական, նաև համադրական մեթոդները՝ հենվելով հեղինակի ստեղծագործությունների վրա: Վերջիններս հնարավորություններ ստեղծեցին թափանցելու այդ յուրատիպ արվեստի և գեղագիտության խորքը, բացահայտելու դրանց հմայքն ու կենսական ճշմարտությունները:

Քնարական ու արձակ հիասքանչ պատկերներում տողանցում են հոգու բռնկումների հարատև արձագանքներ: Սևակը հայտնաբերում է անհատի հոգևոր ինքնաստեղծման բազմաթիվ դրսևորումներ՝ զուգորդելով ներքին օղակների ներհյուսումներով («Ցնծուն մահ»):

Քերթողն ըսավ. — «Անու՛շ վըտակ,

Շյուղերու տակ, ճյուղերու տակ

Ո՞ւր կը վազես աննըպատակ... (Սևակ Ռ., 1985, էջ 155):

Ռ. Սևակի ստեղծագործությունն իր ժանրային ամբողջականությամբ մարդկային կենսագրությունների բանաստեղծական արձագանքների մի անկրկնելի ու ինքնատիպ մատյան է՝ հույզերի անպարագիծ խորությամբ, խոհերի փիլիսոփայական հազեցվածությամբ և կենսագրական բաղադրումներով («Զանգակնե՛ր, զանգակնե՛ր»):

Որովհետև դեռ հեռու է օրն այն,

Երբ գայլն ու գառնուկ սիրով արածին...

Թե ապրիլ կ'ուզե գառը նորածին՝

Պետք է իր ակռան սրե լռելյայն... (Սևակ Ռ., 1985, էջ 106):

ՔՆՆԱԸԿՈՒՄ

Գեղագետի փայլուն վարպետությամբ հասկապես արձակ ստեղծագործություններում հեղինակը տիպականացնում է երևույթներն անհատականությունների մեջ: Հոգեբանական ու փիլիսոփայական իրենց տարերքում Սևակի կերպարները գեղարվեստական կառույցի ու փիլիսոփայական միտումի մեջ ստանում են այլ հմայք ու գրավչություն. «Ո՛չ, Դյուցազնորենը գրողը երիտասարդ պիտի չմեռներ: Ան պիտի ծառանար ահավոր հիվանդության դեմ, ան պիտի սրբեր իր ճակտին գիրը, ան պիտի պայքարեր Մահվան հետ» (Սևակ Ռ., 1985, էջ 308):m

Կյանքը գեղեցիկ է և ոչ ներդաշնակ. խրթին հարաբերությունների մեջ հայտնվում են կերպարներ, որոնք իրենց կենսագրություններով ընդհանրական ու հավաքական լիցքեր ունեն. «Եվ սակայն Վոլթեր այսքանով հուսահատող մարդ մը չէր: Իր ծերունի ու կմախքացած կուրծքին տակ միշտ երիտասարդ կմնար սիրտը, միշտ խանդավառ, միշտ ժպտուն» (Սևակ Ռ., 1985, էջ 315):

Ռ.Սևակի ստեղծագործական աշխարհը բարդ կառուցվածք ունի: Գեղարվեստական ուրույն հյուսվածքներին հավելվում են կենսագրական ինքնաբավ արտագեղումները («Ինչո՞ւ»):

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,

Փոքրի՛կ աղջիկ, քեզի մե՛ղք էր.

Փոքրիկ ծոցիդ թիթե՛ռ պետք էր,

Դուն ծե՛ր արծիվ մը բանտեցիր... (Սևակ Ռ., 1985, էջ 136):

Որպես յուրատեսակ վերապրում՝ հեղինակը հյուսում է իր ստեղծագործության մեջ սիրո մի ուրույն աշխարհ, որը միանգամայն նոր նվագներ է արտագեղում Ռ. Սևակի ստեղծագործական զգացողություններում, քնարական գեղեցիկ ու մշտամնա նվագներ, որոնք այսօր էլ պահպանում են իրենց հմայքը:

Ռ. Սևակի սիրերգությունը հեղինակի կենսագրության անկրկնելի պատմությունն է՝ ինքնաբավ ու տարերային: Պատկերների փիլիսոփայական կառույցները վերին համադրության մեջ են ներառում զգացմունքի և բանականության հոսքը («Երգ երգոց»):

Արցունքիդ պես նայադներ պար կը դառնան:

Այդ ի՞նչ հեշտանք որ շրթներուդ մեջ կը՛մպես.

Շունչըդ գինով է հովերու պես գարնան,

Ձայնըդ տարփոտ՝ աղբյուրներու երգին պես...

Արցունքիդ մեջ նայադներ պար կը դառնան (Սևակ Ռ., 1985, էջ 79):

Սևակի սիրերգության կենսական հիմքը հոգու կենսագրություն է ստեղծում: Սևակի ստեղծագործությունը հարուստ է սիրային բոլոր ապրումներով, ոգևորությամբ ու բռնկումներով: Ամբողջ ստեղծագործությունը բռնկված է սիրո հրդեհներով, որոնք վառվում են անշեջ կրակի պես: Նրա ստեղծագործությունը լեցուն է կնոջ մանրաքանդակ դրվագումներով ու պատկերներով: Այդ պատկերներն այնքան

տեսանելի են ու շարժուն, որ ստեղծվում են յուրատիպ շարժանկարներ: Ապրած կյանքը դառնում է գրականություն («Եկո՛ւր»):

Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներեն անուրջիս:

Սրտիս ջահերն այրեցի քեզ ի հանդես... (Սևակ Ռ., 1985, էջ 124):

Սևակի ներաշխարհի տոգորումներում իբրև անփոխարինելի արժեք իր տեղն ունի հայրենիքը: Կոտորածի արհավիրքները ողբերգական ծանր զգացողություններով են տոգորել բանաստեղծի ներաշխարհը: Ռ. Սևակը փոխաձևեց հայրենիքի էսթետիկական համարժեքը՝ հայրենասիրական քնարերգությունը բարձրացնելով նոր աստիճանի:

Ու դո՛ւն, ո՛վ դժբաղդ երկիր հայրենի,
Որ արյունի տա՛ք շամանդաղի մեջ,
Զոհ՝ զագաններու խաղին վայրենի,
Ու համայնասպա՛ռ բոցերու անշեջ,

Կմխա՛ս, դժբա՛ղդ երկիր հայրենի... (Սևակ Ռ., 1985, էջ 112):

Գույնը գրքի վերնագիր, գույնը՝ որպես խորհրդանիշ. «Կարմիր գիրքը»՝ գրված 1910թ. և կարմիր դարձած Ադանայի ջարդերի արյունից: Փոխաբերական մտածողությունն ու խորհրդանիշները հաջորդում են մեկը մյուսին: Գրական բոլոր տեսակների մեջ էլ կերտվում է հեղինակի գրավիչ կերպարը՝ սրտի մեջ, մտքի ու հոգու մեջ Հայաստանի կերպարը («Ջարդի խենթը»):

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.

Հօրս դիակն ուսիս, կքալեմ ահա՛

Ջարդուածներու դաշտին վրայ լուռ...

Զառա՛մ Քահանայ, դիակըդ տըխուր

Ի՛նչ ծանր է ուսիս, ի՛նչ ծանր է ուսիս... (Սևակ Ռ., 1985, էջ 25):

Ժամանակի դրաման, կյանքի ողբերգականությունը արձագանքներ են դրոշմում Ռ. Սևակի տրամադրությունների հնչերանգին: Կյանքի ինքնաճշտման և կյանքի իմաստավորման փիլիսոփայական ներքնատեսության մեջ անխարդախ նախադրյալը դառնում է հայրենիքը: Բանաստեղծը կենսական լայն ուղեծրի մեջ է ներքաշում հայրենիքի միակ ու բացարձակ ճշմարտությամբ ապրող քնարական հերոսին («Մարդերգություն»):

Ա՛խ, անմա՛հ ըլլալ... Ապրի՛լ հավիտյան.
Իսպա՛ռ չունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկյան.
Ժամանակի՛ն պես, ժամանակին մեջ,

Տքա՛լ, տառապի՛լ, բայց ապրի՛լ անվերջ... (Սևակ Ռ., 1985, էջ 56):

«Կարմիր գիրքը» բանաստեղծական ժողովածուից հետո Սևակը պատրաստվում էր հրատարակելու ևս երեք ժողովածու՝ «Քառուր», «Միրո գիրքը» և «Վերջին հայերը»: Ինչպես իրավացիորեն նկատում է գրականագետ Էդ. Ջրբաշյանը, «Այս վերնագրերի վրա գրականագիտության մեջ ուշադրություն չեն դարձրել, այնինչ դրանք կարևոր են Սևակի ստեղծագործական հետաքրքրությունները հասկանալու համար» (Սևակ Ռ., 1995–1996, էջ 15):

Հավելենք, որ բանաստեղծի կողմից ծրագրված ժողովածուներից ոչ մեկը լույս չտեսավ. «Կարմիր գիրքը» մնաց կենդանության ժամանակ Սևակի հրատարակած միակ բանաստեղծական ժողովածուն: Ըստ էության, բանաստեղծի մտահղացմամբ ընթերցողը հաղորդակցվելու էր բանաստեղծական եռերգությանը՝ սեր, հայրենիք և մարդ ներքին միասնությամբ: Հեղինակի առաջին իսկ գիրքը կրում էր նրա բանաստեղծական ինքնատիպության հայտանիշերը՝ ի հայտ բերելով բանաստեղծի ինքնաբացահայտման լայն հնարավորությունները:

Ռ. Սևակի ստեղծագործության համադրությունը բարդ է, բաղադրիչները՝ շատ՝ ընդգրկելով մարդու ոչ միայն ճանաչելի, այլև անճանաչելի մտավոր, զգացմունքային, հոգեբանական ու քաղաքացիական բոլոր դրսևորումները: Մերը Սևակն ընկալում է լայն իմաստով. սեր դեպի մարդն ու կյանքն ընդհանրապես («Գիշերն իջավ...»):

Գիշերն իջավ անամպ, անհուն,

Բյուր, բյուրեղե ի՞նչ նուրբ անուն,

Տալ անուրջի այս սուրբ պահուն.

-Ա՛խ, ապրելու երջանկություն... (Սևակ Ռ., 1985, էջ 155):

Ռ. Սևակի պատկերային համակարգը ներդաշնակ է, հեղինակն իր ստեղծագործության մեջ ձգտում է արտաքին և ներքին ներդաշնակության, ասելիքի ձևի և զգացմունքի ներդաշն արտահայտության: Սևակի գեղագիտական հիմնաշերտի վրա հյուսվում են ինքնատիպ ու նուրբ ստեղծագործություններ՝ անընդհատական կերպով շիկացնելով հեղինակի ստեղծագործական տարերքը («Եկո՛ւր, եկո՛ւր»):

Եկո՛ւր, եկո՛ւր, ճամփաներեն անուրջիս,
Սրտիս ջահերն այրեցի քեզ ի հանդես,
Վերջին անցորդ տառապանքի կամուրջես,
Երգի մը պես, քրոջ մը պես, մոր մը պես

Եկո՛ւր, եկո՛ւր ճամփաներեն անուրջիս... (Սևակ Ռ., 1985, էջ 124):

Հավելենք, որ բանաստեղծական հրդեհի ոգելից ներշնչանքը մշտապես ուղեկցում է Ռ. Սևակին նաև նրա արձակ գործերում և նամակագրության մեջ, քնարական շունչը՝ որպես բնանկար, որպես սիրերգ («Երթա՛լ»):

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց ճրագի.

Երթա՛լ առանց սուգի, լացի, փափագի.

Երթա՛լ՝ առանց սովի, պապագի... (Սևակ Ռ., 1985, էջ 147):

Ռ. Սևակի և՛ բանաստեղծական շարքերը, և՛ արձակ ստեղծագործությունները, և՛ նամակագրությունը ամբողջական են թե՛ բովանդակությամբ, թե՛ ոճային մտածողությամբ՝ թողնելով սկիզբ, զարգացում և ավարտ ունեցող ստեղծագործության տպավորություն, բնութագրվելով ապրումների հաջորդականությամբ և յուրատիպ քնարականությամբ («Գինո՛վ սեր»):

Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, Դուն Սերն ես.

Տարաշխարհի չքնաղ ծաղիկն ես աղվոր.

Միաթիփական խնկումներով թունավոր

Դուն մըսեղեն խենթեցրնող տաճարն ես.

Դուն Հրա՛շքն ես, դուն Երա՛զն ես, Դուն Սերն ես (Սևակ Ռ., 1985, էջ 61):

Ներքին ստեղծագործական տարերքը Սևակի ստեղծագործություններում նշանավորվել է նաև խորհրդանշանների իմաստավորմամբ («Զանգակնե՛ր, Զանգակնե՛ր»):

Զանգակնե՛ր, բարի՛, բարի՛ զանգակներ,

Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն,

Խոսք ելլել կ'ուզե արյունը վազուն...

Կը լռե՛ք, բարի՛, բարի՛ զանգակներ (Սևակ Ռ., 1985, էջ 106):

Հեղինակի ստեղծագործության կարևոր հանգրվաններից է արձակը: Սևակի արձակ գործերը ժանրային իմաստով բազմազան են՝ հողվածներ, զրույցներ,

խորհրդածություններ: 1911-1914 թթ. հիվանդանոցում աշխատելիս բանաստեղծն ակնաստես է եղել մարդկային բազմաթիվ ողբերգությունների՝ դրանց հետևում նշմարելով հասարակության բարոյական պատկերը ներկայացնող կենսական խոր դրամաներ: Դրանք էլ ընկած են «Բժիշկին գիրքեն փրցուած էջեր» գրքի պատմվածքների հիմքում, որոնք բժշկի օրագրություններ են: Հեղինակը կենդանի ու բնական գույներով ներկայացրել է ստացական ախտերի ամբողջ սարսափը՝ ատելություն ու նողկանք առաջացնելով դրանց նկատմամբ. «Ապրիլը հաղթել է», «Կռունկը», «Ահավոր տարակույսը»: Այս գործերում ուրվագծվում է հայրենասեր և մարդասեր բանաստեղծի քաղաքացիական բարձր նկարագիրը: Սևակը արևմտահայ գրականության պատմության մեջ, ըստ էության, ստեղծում էր արձակի նոր ժանր: Ինչպես իրավացիորեն նկատում է գրականագետ Վլ. Կարապետյանը, «Ժանրային տեսակետից այս ստեղծագործությունները բազմազան են. փոքրաթիվ գեղեցիկ նորավեպերի ու պատմվածքների կողքին կան դիդակտիկ մանկավարժական զրույցներ ու փիլիսոփայական խորհրդածություններ: Հաճախ այդ հատկանիշները միաձուլված են հանդես գալիս նույն գործի մեջ» (Սևակ Ռ., 1985):

Ռ. Սևակն արևմտահայ գրականության պատմության մեջ առաջինն է գրել նամականու ժանրով. նամակները նրա ստեղծագործական ժառանգության մի մասն են: Նամակներ գրել է կնոջը՝ գերմանուհի Յաննի Ապելին, ինչպես նաև ընկերներին ու ծնողներին: Ռ. Սևակի նամակագրությունը բնութագրվում է սիրո փառաբանական, օրհներգային հանդիսավորությամբ, ծիսական հանդարտությամբ: Այդ ամենը որքան երազային, նույնքան էլ նյութական է, առարկայական: Բանաստեղծական անսպառ հնարավորություններով Սևակը գովերգում է կնոջը, նրա գեղեցկությունն ու ոգեղեն տարերքը՝ ստեղծելով մի յուրօրինակ աշխարհ՝ իր դարձդարձիկ ճանապարհներով ու ստեղծագործական վարպետությամբ. «Օ, իմին աղուոր կինս, ամենապաշտելին, ամենահմայիչը, ամենասիրագեղը պզտիկ կիներուն մեջ: Եթե հիմա գիտնայիր, թե ինչքան կը սիրեմ քեզ եւ ինչպէս կը տառապիմ քու բացակայութենէդ: Եւ եթե գիտնայիր, թե ինչքան սիրատոչոր ու բարի պիտի ըլլամ քու վերադարձիդ: Եւ եթե գիտնայիր նաեւ, թե որքան կօրհնեմ այս կարճ բաժանումը...»

Մեծ գեղեցկութիւնները մեծ լեռներ են. երբ մարդ այդ լեռներուն վրայ է, այնքան ալ չի նկատեր անոնց մեծութիւնը. պէտք է որոշ տարածութիւն մը, կարենալ դատելու

համար անոնց վսեմ գեղեցկութեան մասին...» (Սևակ Ռ., 1985): Այս ամենը նժարում է բանաստեղծական խոսքի արժեկշիռը՝ ստեղծելով հոգևոր մի եզերք, ուր ի մի են բերվում ժամանակը, արդարությունն որոնող մարդը՝ սերունդների հավաքական ներկայացուցիչն ու ցավի և կարոտի ձայնարկուն:

«Հրաշալի բժշկություն» ակնարկում բժիշկ և արվեստագետ Ռ. Սևակը գրում է. «Կո՛ւյր պետք է ըլլալ չտեսնելու համար այն բազմաթիվ հիվանդները, որոնք երկար ճամբորդություններ կընեն, բժիշկե բժիշկ կը նետվին...»

Որովհետեւ դժվար է ընդունիլ այն բազմաթիվ դեղերը՝ որոնք հաճախ տրամագծորեն հակառակ են իրարու...: Ու հետո՝ հիվանդին փրկնտոածը միայն թուղթի կտոր մը չէր, այլ ապրելու հո՛ւյս, հոգեկան ուժ, տառապելու քաջություն...» (Սևակ Ռ., 1985): Ռ.

Սևակը հրաշալիորեն է համադրում հավերժականի և հարավոփոխի կշռույթները. մարդը բնության մեջ, մարդն ինքն իր դիմաց, մարդը պատմության մեջ, մարդը ճակատագրական պահին, մարդը և ներաշխարհը և այլն: Իր ամբողջ կյանքում Սևակը ձգտեց կատարելության և իր ստեղծագործությամ մեջ էլ կերտեց կատարյալն ու իդեալականը: Հեղինակի ձեռքը մշտապես ժամանակի զարկերակի վրա էր («Տրտո՞ւմ ոգի»):

Ես հեռացա՜ տարտամին մեջ խոլաբար,

Իմ երագիս ճամբաներեն անդադրում,

Գիշերներու հովին նման խոլապար,

Վերջալույսի թռչուններուն պես տրտում (Սևակ Ռ., 1985):

Սևակը հրաշալի պատմող է: Շարադրանքում դրվագային հաջորդականությունը ստեղծում է հետաքրքիր պատմությունների շղթաներ, որոնց մեջ մարմնավորվում ու կերպավորվում են Սևակի հերոսները: Իրար հաջորդող փոքր պատմություններում հյուսվում են մեծ անհատականությունների շատ գրավիչ կերպարներ: Ինչպես նկատում է Ռ. Սևակը, «Դատավորներու օրենքին պես բժկոփիթյունն ալ իր օրենքներն ունի, բայց որքա՜ն ավելի ահավոր, անդրդվելի, անհեղի, վրեժխնդիր օրենքներ...» (Սևակ Ռ., 1946, էջ 36):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականության մեջ Ռ. Սևակն ունի իր ինքնահատուկ տեղը, որն ինքն է ստեղծել իր գրականության և իր նկարագրի գուտ սևակյան տեսակով.

արդիականություն, ժանրային զուգորդություններ ու ներթափանցումներ, ասելիքի նուրբ դիպուկություն՝ հոգեբանական և փիլիսոփայական հենքին աղերսված, կենդանի ապրումներ, բանաստեղծական յուրատիպ շունչ: Իրական, ապրված զգացմունքների մի անկրկնելի մատյան է Ռ. Սևակի ստեղծագործությունը, որը հոգևոր կամուրջ է անցյալի և ներկայի միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Կիրակոսյան Վ. (1972). Ռ. Սևակ. «Սովետական գրող» հրատ. 255 էջ.
- Կիրակոսյան Վ. (1985). Արևմտահայ բանաստեղծությունը 1890–1907թթ. Ե. 155 էջ.
- Կիրակոսյան Վ. (1972). Ռուբեն Սևակ (Կյանքը և ստեղծագործությունը). Ե. 191 էջ.
- Պետրոսյան Վ. (2003). Ռուբեն Սևակը և մեր ժամանակը. Ե. 175 էջ.
- Ջրբաշյան Է. (1965). Ռ. Սևակ (ստեղծագործության համառոտ ակնարկ). «Միտք» հրատ. 116 էջ.
- Սևակ Ռ. (1946). Բժիշկին գիրքեն փրցված էջեր և քերթվածներ. «Հայ գրագետներու բարեկամներ» մատենաշար. 244 էջ.
- Սևակ Ռ. (1985). Երկեր. «Սովետական գրող» հրատ. 480 էջ.
- Սևակ Ռ. (1995–1996). Երկեր (հ. 1). «Լույս» հրատ. 325 էջ.
- Սևակ Ռ. (1997). Երկեր. Մայր Աթոռ Ս. Էջմիածին. 250 էջ.
- Սևակ Ռ. (2006). Երկեր. Հատընտիր (հայ. և ֆրանս.). Ե. 456 էջ.

REFERENCE LIST

- Kirakosyan V. (1972). R. Sevak (*R. Sevak*). Izd. «Sovetskiy pisatel'». 255 s.
- Kirakosyan V. (1985). Zapadnoarmyanskaya poeziya 1890–1907 gg. (*Western Armenian Poetry 1890-1907*). Yerevan. 155 s.
- Kirakosyan V. (1972). Ruben Sevak (*R. Sevak*). (Zhizn' i tvorchestvo). Yerevan. 191 s.
- Petrosyan V. (2003). Ruben Sevak i nashe vremya (*R. Sevak and Our Time*). Yerevan. 175 s.
- Dzhrbashyan E. (1965). R. Sevak (Kratkiy obzor tvorchestva) (*R. Sevak*). (*A Brief Overview of Works*). Izd. «Mysl'». 116 s.
- Sevak R. (1946). Stranitsy i stikhotvoreniya, posvyashchennye vrachu (*Pages and Poems Dedicated to a Doctor*). Seriya «Druz'ya armyanskoy literatury». 244 s.
- Sevak R. (1985). Sochineniya (*Works*). Izd. «Sovetskiy pisatel'». 480 s.

Sevak R. (1995–1996). Sochineniya (t. 1) (*Works, Vol. 1*). Izd. «Luyis». 325 s.

Sevak R. (1997). Sochineniya (*Works*). Mat'–mater' Svyatoy Echmiadzin. 250 s.

Sevak R. (2006). Sochineniya (*Works*). Izbrannoye (arm. i frants.). Yerevan. 456 s.

РЕЗЮМЕ

ТРАЕКТОРИЯ ХУДОЖЕСТВЕННЫХ ИНТЕРЕСОВ И ТВОРЧЕСКИХ ПОИСКОВ

РУБЕНА СЕВАКА

Шогик Мелконян

Рубен Севак представляет собой одну из наиболее значимых и ярко выраженных индивидуальностей в армянской литературе. Его творчество отличается многожанровостью, устойчивой актуальностью и ориентацией на фундаментальные, природно сложившиеся ценности, характерные для его эстетической системы. Лирические произведения Севака выступают как своеобразные одические структуры, посвящённые человеку, любви и родине, тогда как его прозаические тексты рассматриваются исследователями как проявление нового литературного формообразования, сочетающего философско-рефлексивный пласт с художественно-эстетическими компонентами. В центральной системе мировоззрения автора устойчиво присутствует образ родины, который становится концептуальной основой его поэтики. В его произведениях конструируется идеализированная модель мирного и безопасного пространства — с гармоничной природой, стабильными семейными отношениями и субъектом, реализующим себя через волевое усилие и формулу «жить — значит побеждать». Данные идейно-эстетические установки реализуются через широкий диапазон литературных форм и жанровых модификаций, что сопровождается характерным для Севака выразительным, природным речевым потоком. Современное восприятие его творчества демонстрирует продолжение диалога автора с последующими поколениями, осуществляемого посредством разнообразных творческих стратегий и дискурсивных форм. Вне зависимости от формального выражения, содержательная доминанта его произведений остаётся неизменной — стремление к совершенству как основа целостности художественного мира.

Ключевые слова: литературные жанры и виды, художественный образ, жанровая целостность, любовная поэзия, лирический, внутренний мир, родина, повествовательный.

SUMMARY

THE TRAJECTORY OF RUBEN SEVAK'S ARTISTIC INTERESTS AND CREATIVE EXPLORATIONS

Shoghik Melkonyan

Ruben Sevak is recognized as one of the most significant and distinct individual figures within Armenian literature. His oeuvre is characterized by its multi-genre nature, sustained relevance, and adherence to fundamental, inherently shaped values that constitute the core of his aesthetic framework. Sevak's lyrical works function as ode-like structures dedicated to the human being, to love, and to the homeland, whereas his prose is often interpreted as an instance of new literary formation that integrates philosophical reflection with artistic and aesthetic expressiveness. A persistent conceptual element in Sevak's worldview is the image of the homeland, which serves as a foundational component of his poetics. His works construct an idealized model of a peaceful and secure environment—featuring a harmonious natural setting, stable familial relations, and an individual who affirms self-realization through strong will and through the principle that “to live is to conquer.” These ideological and aesthetic principles are articulated through a broad spectrum of literary forms and genre modifications, accompanied by the distinctive spontaneity and expressiveness of Sevak's authentic linguistic style. Contemporary scholarly perspectives indicate that his creative dialogue with subsequent generations continues through diverse artistic strategies and modes of discourse. Regardless of formal variation, the central semantic constant of his works remains unchanged: the pursuit of perfection as the basis for the integrity and coherence of his artistic universe.

Keywords: literary genres and types, artistic image, genre integrity, love poetry, lyrical, inner world, homeland, narrative.

Հոդվածը ստացվել է՝ 24.09. 2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 29.09. 2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 14.10.2025

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՍՄԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան

Էլ. հասցե՝ hasmikayvazyan@yandex.ru

DOI: 10.24234/scientific.v3i50.249

ԱՄՓՈՓՈՒՄ

Արդի տեխնոլոգիական նորարարությունները և գլոբալ աշխատաշուկայի պահանջները տեխնոլոգիական կրթության նկատմամբ առաջադրում են նոր մոտեցումներ ու լուծումներ, պահանջում են արմատական վերանայում տեխնոլոգիական կրթության հարացույցում, հատկապես զարգացող երկրների համատեքստում: Ավանդական ուսուցման մեթոդները՝ կենտրոնացած տեսական գիտելիքի փոխանցման և ստանդարտացված գնահատման վրա, այլևս բավարար չեն սովորողներին 21-րդ դարի հմտություններով զինելու համար: Այսօր կարևորվում է ակտիվ, գործնական, իրական կյանքին մոտեցված ուսուցումը, որը ձևավորում է ոչ միայն տեխնիկական գիտելիքներ, այլև ստեղծարար մտածողություն, խնդիրների լուծման կարողություն, թիմային աշխատանք և պատասխանատվություն:

Սույն հոդվածը քննարկում է առկա կրթական մարտահրավերները տեխնոլոգիական կրթության կազմակերպման ոլորտում և հրամայական համարում նախագծահեն ուսուցումը: Հոդվածում նախագծահեն ուսուցումը դիտարկվում է կրթական ծրագրի ներսում գործող ստարտափ՝ հաշվի առնելով սովորողի կարիքները և պահանջները, ինչպես նաև աշխատաշուկայի վերլուծությունը: Ստարտափ-ոգեշնչված նախագծահեն մոդելը ոչ միայն կապում է կրթությունն աշխատաշուկայի հետ, այլև նպաստում է այնպիսի կրթական համակարգի ձևավորմանը, որն ուղղված է ապագայի ստեղծարար և ինքնուրույն մասնագետի ձևավորմանը:

Բանալի բառեր. նախագծահեն ուսուցում, կրթական մարտահրավերներ, տեխնիկական առարկաների դասավանդում, կրթական տեխնոլոգիաներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր աշխարհը նորարարությունների նոր ալիքի շեմին է, որը կարող է կտրուկ փոխել առկա կրթական հիմնապատկերը: Հատկապես տեխնոլոգիական նորարարություններին զուգընթաց շարժվելու համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում ցուցաբերել ուսուցման մեթոդների, դասավանդման գործիքակազմի և կրթության կառուցվածքի փոփոխություններին: Կրթության գլոբալ շարունակվող թվայնացումը հանգեցնում է տարբեր կրթական առարկաների առաջացման, ինչպես նաև «կրթական տեխնոլոգիաների» (EdTech) ավելի մեծածավալ կիրառման (Tsymbal & Kalenyuk, 2023): «Կրթական տեխնոլոգիաները» կրթության մեջ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ցանկացած կիրառումն է (Rodriguez-Segura, 2021): Միանգամայն հնարավոր է, որ առաջիկա հինգ տարիների լավագույն կրթական նախագծերը դեռևս չեն ստեղծվել, և ժամանակակիցներս դեռ հնարավորություն կունենանք ականատես լինել դրանց ի հայտ գալուն (Volkov & Konanchuk, 2014):

Այս համատեքստում առավել քան արդիական է տեխնիկական առարկաների ճիշտ դասավանդումը: Հայաստանի զարգացող տեխնոլոգիական ոլորտը և ստարտափ էկոհամակարգը ընդգծում են նորարարական կրթության աճող անհրաժեշտությունը՝ երիտասարդներին համապատասխան հմտություններով զինելու համար: Սակայն երկրի ավանդական կրթական մոտեցումները դժվարությամբ են արձագանքում այս պահանջին. բազմաթիվ դպրոցներում հատկապես գյուղական համայնքներում նկատվում է STEM առարկաների (գիտություն, տեխնոլոգիա, ինժեներիա, մաթեմատիկա) ուսուցիչների խիստ պակաս: Մինևս ժամանակ, միջազգային կրթական հետազոտությունները շեշտադրում են 21-րդ դարի հմտությունները՝ ստեղծարարություն, խնդիրների լուծում, թվային գրագիտություն, որոնք լավագույնս ձևավորվում են ակտիվ, նախագծային ուսուցման միջոցով:

Հիմնվելով առկա վերլուծությունների և դասավանդման անձնական փորձի վրա, այս հոդվածը նպատակ ունի քննարկել Հայաստանում տեխնիկական կրթության մարտահրավերները և առաջարկել կրթական նոր մեթոդաբանության կիրառում, որը տեխնիկական կրթությանը կվերաբերվի որպես ստարտափնախագծի, որտեղ

սովորողներն ու աշակերտները հնարավորություն կունենան որակյալ գիտելիք ստանալ՝ առնչվելով նախագծի ստեղծումից մինչև իրականացում ընկած բոլոր քայլերին ու դրանց դժվարություններին:

ՄԵԹՈԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի մեթոդաբանությունն ընտրված է դասավանդման գործընթացի արդյունավետությանը միտված հիմնական սկզբունքներին, տեխնիկական կրթության նորարարական մոտեցումներին համապատասխան և հիմնված է երկրորդային աղբյուրների, այն է՝ առկա գիտական և հրապարակախոսական նյութերի վրա՝ լրացված հեղինակի Հայաստանյան մասնագիտական դիտարկումներով: Գլխավոր աղբյուրներն իրենցից ներկայացնում են գիտական և հրապարակախոսական հրապարակումներ և գործնական զեկույցներ, որոնք նկարագրում և քննարկում են տեխնոլոգիական կրթության նորարարական մոտեցումները:

Այս մոտեցումը համապատասխանում է հայեցակարգային հետազոտության ընդունված մոդելներին, որոնք հիմնվում են առկա ուսումնասիրությունների ապացույցների և փորձագիտական մեկնաբանության վրա՝ փաստարկներ կառուցելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Չնայած տեխնոլոգիական առաջընթացին և աշխատաշուկայում տեխնիկական հմտությունների պահանջարկի կտրուկ աճին՝ կրթական համակարգերը, հատկապես Հայաստանի նման զարգացող երկրներում, հաճախ շարունակում են պահպանել ավանդական, դասախոսահեն մոտեցումներ: Դասավանդումը հիմնականում հիմնված է տեսական գիտելիքների փոխանցման, վարժությունների վերարտադրության և ստանդարտացված քննությունների վրա՝ սովորողներին զրկելով ստեղծագործելու, փորձարկելու և պրակտիկ կիրառման հնարավորությունից (Valbona, Msc & Mimoza Belshi, 2017): Շատ ուսուցիչներ չունեն համապատասխան գործիքներ կամ վերապատրաստում՝ դասարաններում տեխնոլոգիական և նախագծահեն ուսուցում իրականացնելու համար, իսկ դասընթացների բովանդակությունը չի համապատասխանում ոլորտի արագ փոփոխվող պահանջներին: Այս պայմաններում սովորողները հաճախ ավարտում են կրթական հաստատությունները առանց իրական

փորձի կամ փոխկապակցված հմտությունների, որոնք անհրաժեշտ են ժամանակակից աշխատաշուկայում:

Տեխնիկական կրթության արդյունավետ բարելավման համար կարևոր է ոչ միայն նորարարական մոտեցումների կիրառումը, այլև առարկայի դասավանդման կառուցվածքային հիմնախնդիրների խորքային վերանայումը: Նախքան ուսուցումն սկսելն անհրաժեշտ է հասկանալ, թե ինչն է արդեն բացահայտված և ինչը դեռ ուսումնասիրման կարիք ունի: Անհրաժեշտ է ուրվագծել առարկայի դասավանդման մոտավոր աշխատանքային պլանը: Հնարավոր է՝ կարիք լինի դրան հարմարեցնել արդեն գոյություն ունեցող համակարգը: Այս առումով առավել քան դիտարժան է տեխնիկական առարկաների դասավանդումը:

Տեխնիկական առարկայի ճիշտ դասավանդման համար պետք է առաջադրվեն հետևյալ հիմնահարցերը՝

- Կրթական ծրագրի անհատական ուղին
- Կրթական ծրագրի շրջանավարտի հստակ կերպարը
- Գիմորդներին ներկայացվող պահանջները
- Բաց և թափանցիկ փոխհարաբերությունները
- Նախագծահեն ուսուցումը
- Մոլորողների պատասխանատվությունը և սուբյեկտիվությունը
- Գործընկեր կազմակերպությունների հետ հարաբերությունները
- Արտաքին գնահատումը
- Արժեքահեն անձնակազմը
- Հարմարեցումը, ոչ թե պատճենումը

Որպես կանոն տեխնիկական կրթական ծրագրի ներդնումը գուցորդվում է «Ձեռնարկատիրություն» ուղղության հետ, ինչը նպաստում է տեխնիկական առարկային զուգընթաց ձեռնարկատիրական և առևտրային գործունեության զարգացմանը: Նման ծրագրերի իրականացումը կարող է ձևավորվել որպես փոքր, բայց հավակնոտ, վառ և ուշադրություն գրավող փորձարարական նախագիծ՝ ընդունված առարկաների շրջանակներում:

Առկա խնդիրներին արձագանքելու համար առաջարկվում է տեխնիկական կրթությանը մոտենալ որպես «ստարտափ»՝ ուսուցման նորարար մոդել: Այս

մոտեցումը հիմնված է ձեռնարկատիրական մշակույթի, փորձառական ուսուցման և նախագծահեն մեթոդաբանության վրա: Սովորողները ներգրավվում են իրական խնդիրների լուծման գործընթացներում, աշխատում են թիմերով, ստեղծում նախատիպեր, ստանում ուղիղ արձագանք և վերամշակում իրենց գաղափարները՝ ինչպես ստարտափում: Այս ձևաչափը ոչ միայն զարգացնում է տեխնիկական հմտությունները, այլև խթանում է ստեղծարարություն, թիմային աշխատանք, պատասխանատվություն և ճկունություն՝ հմտություններ, որոնք այսօր առավել պահանջված են (Clark, Threeton & Ewing, 2010): Ուսումնական գործընթացի կենտրոնում դրված է ոչ թե տեղեկատվության փոխանցումը, այլ՝ իրական կիրառման և ինքնուրույն ստեղծագործելու հնարավորությունը: Այս մոդելը հնարավոր է ներդնել նույնիսկ սահմանափակ ռեսուրսների պայմաններում, եթե ստեղծվում է համագործակցային մթնոլորտ, ներգրավվում են ոլորտի մասնագետներ և վերանայվում է ուսուցման նպատակը՝ այն դիտարկելով որպես ապագա մասնագետների ձևավորման գործիք:

Նոր ծրագրի կամ ուղղության գործարկումը որպես «ստարտափ՝ ուսումնական հաստատության ներսում» ավելի լայն հնարավորություններ է ընձեռում, բայց երկրաչափական պրոգրեսիայով աճում է նաև արդյունքի նկատմամբ պատասխանատվությունը: Առաջնային ուշադրության կենտրոնում պետք է պահել սովորողների և աշխատաշուկայի շահերը, քանի որ սովորողները նպատակաուղղված են գալիս և տեխնիկական կրթության տվյալ ծրագիրն ավարտելուց հետո մեծ պահանջարկ են վայելում աշխատաշուկայում:

Շրջանավարտի նպատակային կերպարը պետք է կառուցվի համաշխարհային տնտեսության միտումների հենքի վրա և համապատասխանի աշխատաշուկայի պահանջներին: Տեխնոլոգիական կրթության շրջանավարտի կերպարի կիզակետը պետք է լինի 21-րդ դարի հմտությունները: Եվ թվարկված մուտքային բաղադրիչների պարագայում կկառուցվի հիմնավորված և հետևողական համակարգ, որի շնորհիվ շրջանավարտը կունենա եզակի հմտություններ և կարողություններ՝ իրական տեխնոլոգիական խնդիրներ լուծելու և սեփական նորարարական նախագծեր ստեղծելու ունակությամբ, թիմում արդյունավետ աշխատելու կարողությամբ: Բնականաբար այստեղ շատ կարևոր է ուսուցման ժամանակակից մեթոդների

շրջանակում սովորողների նախապատրաստումը ապագա աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման և արդյունավետ փոխանցման համար:

Տեխնիկական կրթական ծրագրի ներդրումն անհրաժեշտ է սկսել ներկա իրավիճակի վերլուծությունից:

Աշխարհն այսօր չափազանց բարդ է մարդու համար. այն փոխվում է շատ արագ ու անկանխատեսելի է, քանի որ մասնագիտությունները հնանում են ավելի արագ, քան մարդը կարող է ավարտել իր ուսումը, իսկ դիպլոմը վաղուց մրցակցային առավելությունից վերածվել է սոցիալական կարգավիճակի վկայագրի (Лысенко, 2024):

Այսօր գործատուներն աշխատակից ընտրելիս ապավինում են ավարտված նախագծերի պորտֆելին և ձկուն հմտություններին՝ նախընտրելով թիմ ընդունել լավ համակարգված գիտելիքներով և կարողություններով մասնագետների, իսկ մասնագետի արժեքը չափվում է վերջինիս քննադատական մտածողության զարգացմամբ, շարունակաբար սովորելու ու հարմարվելու և համակարգված մտածելու ունակությամբ:

Արդի կրթական ծրագրերը դժվար է պատկերացնել առանց փափուկ հմտությունների: Հիմնական խնդիրն է պայմաններ ստեղծել այնպիսի մասնագետի աճի համար, ով կարող է աշխատել ոչ միայն բարդ թիրախային համակարգի հետ, այլ նաև միջառարկայական ուղղությամբ՝ հաշվի առնելով հարակից համատեքստերը: Կարևոր է, որ շրջանավարտը հասկանա, թե ինչպես է այսօր գործում համաաշխարհային տնտեսությունը և ինչպես պետք է այդ համատեքստում զարգացնել պահանջված կրթական համակարգը, ապագայում ինչպես հասկանալ սեփական գործունեության հիմնական գործառույթը և դրան հարակից համատեքստերը ու կազմակերպել թիմային աշխատանքը, ձևակերպել արդյունավետ վարկածներ, սկսել և ղեկավարել բարդ նախագծեր: Անորոշության պայմաններում աշխատելու իրավասությունները ամենադժվարն են, բայց և ամենաանհրաժեշտն այս անհանգիստ աշխարհում: Եվ այսօրվա շրջանավարտը, վաղվա մանկավարժը, դասախոսը պետք է պատրաստ լինի իրավիճակը փոխելու և կարողանա լրացնել իրեն պակասող գիտելիքը, որպեսզի կարողանա գործել նոր, արդյունավետ պայմաններում:

Այսօր մրցակցությունը մեծ է, և դա թույլ է տալիս, որ առաջադեմ տեխնոլոգիաների ոլորտը ներգրավի առավել մոտիվացված սովորողներ:

Ընտրության հիմնական չափանիշը դիմորդի պատրաստակամությունն է: Բարդ կամ անսովոր կրթական համակարգում սովորաբար առաջին մեկ-երկու ամիսներից հետո պետք է զգալի լինի սովորողների հոսունությունը: Որոշ սովորողներ իրենց ցանկությամբ պետք է հեռանան, հասկանալով, որ կրթության այդ մոդելն իրենց չի համապատասխանում:

Տեխնիկական նոր կրթական ծրագիրը պետք է այնպիսի հիմքեր ունենա, որ դուրս մնացած սովորողները ոչինչ չկորցեն և կարողանան ուսումը շարունակել այլ կրթական ծրագրերում:


Ընդունելությունը պետք է կազմակերպել այնպես, որ դիմորդը գիտակցված և նպատակաուղղված ընտրի կրթական ծրագիրը՝ հասկանալով, թե ո՞ր է գնում և ի՞նչ է ուզում: Սովորողը պետք է հստակ գնահատի իրեն սպասվող աշխատանքի ծավալները:

Սովորողները մշտապես պետք է մասնակցեն ֆորումների, փառատոների, մրցույթների, իսկ կրթական հաստատությունները պետք է պարբերաբար կազմակերպեն բաց դռների օրեր՝ դպրոցականների և ծնողների համար: Հաճախակի և տարբեր հարթակներում կրթության նորարարությունների և փոխակերպումների թեմաներով խոսելը շարունակական հետադարձ կապ է ապահովում, որի հիման վրա էլ շարունակաբար բարելավվում է ուսումնական փորձը: Ժամանակակից ներդրված թվային համակարգերի շնորհիվ ցանկացած դասընթաց, ուսուցիչ կամ ընդհանրապես ցանկացած գործողություն կարող է գնահատվել իրական արձագանքների հիման վրա: Սովորողների բոլոր պաշտպանությունները պետք է լինեն բաց և հրապարակային, այսինքն՝ տարբեր ընկերությունների ներկայացուցիչներից մինչև սովորողի ծնողները կարող են ներկա գտնվել: Ցանկացած մեկը պետք է հնարավորություն ունենա գալ կրթական հաստատություն և «ապրել» սովորողների հետ ամբողջ օրը որպես ուսումնառու՝ մասնակցել ստեղծագործական և վերլուծական քննարկումներին, դասերին, շփվել սովորողների և դասավանդողների հետ:

Տեխնիկական առարկայի ճիշտ դասավանդման ժամանակ առանցքային տեղ է զբաղեցնում նախագծային մեթոդը: Առանձնահատկությունն այն է, որ սովորողներին առաջարկվում են իրական «բաց» խնդիրներ՝ որոնց լուծման համար անհրաժեշտ է նորարարական մոտեցումներ և գաղափարներ որոնել: «Բաց» խնդիրները

ձևակերպված են այնպես, որ լուծում գտնելու գործընթացում սովորողները պարտադիր կբախվեն գիտելիքի պակասորդի հետ և նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու հնարավորություն կստանան: Այստեղ օգնության են գալիս դասավանդողները, ովքեր օգնում են սովորողներին լրացնել իրենց գիտելիքների բացը: Այս նպատակային գիտելիքը սովորողներն ստանում են դասախոսությունների, նախագծերի քննարկումների և խորհրդատվությունների միջոցով: Այսպիսով, սովորողի համար պարզ է դառնում, թե ինչն է պետք է իրենք յուրացնեն այս կամ այն առարկան: Արդյունքում գիտելիքը ձեռք է բերվում համակարգված, որպես անմիջական իրական փորձի հետ կապված ամբողջություն:

Նախագծային ուսուցման գծապատկերը



Օրինակ, եթե սովորողն աշխատում է եռաչափ մոդելի ստեղծման նախագծի վրա, պետք է ուսումնասիրի «Համակարգչային նախագծման համակարգեր» թեման, խորհրդակցի փորձագետ ուսուցչի հետ, հարցեր պատրաստի այդ խորհրդակցությունների համար և կատարի գործնական առաջադրանքներ, որոնք անմիջականորեն կապված են իր նախագծի հետ: Այսինքն՝ սովորողները պարզապես չեն լսում դասավանդողին, այլ ավելի շուտ «հարցաքննում» են նրան (Лысенко, 2024):

Սովորողները պետք է կարողանան պաշտպանել իրենց նախագծերը արտաքին փորձագետների առջև, որտեղ հրավիրյալները կարող են հարցեր տալ արդյունքի և արտադրանքի վերաբերյալ, և սովորողները պետք է ըստ արժանվույն պատրաստվեն: Նման ներկայացման պատրաստվածության մակարդակը պետք է համեմատելի լինի վերջնական թեզը պաշտպանելու պատրաստվածության մակարդակի հետ, միայն մեկ

տարբերությամբ, որ թեզի պաշտպանությունը տեղի է ունենում մեկ անգամ, իսկ նախագծային աշխատանքի պարագայում այդ հաճախականությունը կտրուկ մեծ է:

Տեխնոլոգիական կրթության արդյունավետության վրա մեծ ազդեցություն պետք է ունենա բիզնեսի հետ փոխգործակցությունը: Վերջինս զարգանում է քայլ առ քայլ՝

➤ձշակվում է կրթություն-բիզնես համատեղ գործակցության մոդուլ. այս ձևաչափը բիզնեսից մեծ ռեսուրսներ չի խլում և հնարավորություն է տալիս ծանոթանալ կրթական հաստատության և սովորողների առանձնահատկություններին, իսկ սովորողները կարող են այդ փոխգործակցությունից նշանակալի օգուտ ստանալ,

➤ստեղծվում է հիմնական ծրագրի կամ մասնագիտական ուղու մոդուլը,

➤բիզնեսը հրավիրում է սովորողներին աշխատանքի,

➤տարբեր ընկերություններից առաջադրվում են առաջադրանքներ ուսումնական նախագծերի, կարճաժամկետ դասընթացների և մրցույթների համար:

Նախագծային աշխատանքի ժամանակ ընկերությունների կողմից ներկայացված փորձագետներն են աշխատում սովորողների հետ: Իսկ սարքավորումները շահագործելու հմտություններ սովորողները ձեռք են բերում ընկերություններում:

Տեխնոլոգիական առարկաների ճիշտ դասավանդումը պետք է լինի շատ ճկուն, սովորողների հնարավորություններն առավելագույնս օգտագործող, սովորողների կարիքները վերհանող, աշխատաշուկայի պահանջներին համահունչ, ինչպես իրական ստարտափերում են դա անում:

Մասնագետների նոր սերունդ է աճում, և նրանք գնալու են աշխատանքի այնտեղ, որտեղ պետք է արժեք տեսնեն և բավարարվածություն զգան իրենց արածից: Կրթական ծրագրի խնդիրը պետք է լինի աջակցելը և ուղղորդելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, տեխնիկական առարկաների դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ուսումնառությունը կազմակերպել ստարտափնախագծի մոդելով, որտեղ նախագիծն ընտրվում է աշխատաշուկայի վերլուծության հիման վրա և իրականացվում է ըստ սովորողի կարիքների և պահանջների: Այս ստարտափնախագծերի հիմքում պետք է դրված լինեն

ձեռնարկատիրական և առևտրային գործունեության հմտությունների զարգացումը և իրական կապը գործատուների հետ: Կրթության այս մոդելը կապահովի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան շրջանավարտի կերտումը և վերջինիս անխոչընդոտ մուտքը աշխատաշուկա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Лысенко, А.** (2024). *Как внедрить техпред в университете в 2024 году: 10 слагаемых успеха.* Available at: https://tech-innovations.ru/kak-vnedrit-tekhpred-v-universitete-v-2024-godu-10-slagaemyh-uspekha?utm_source=email&utm_medium=campaign1&utm_campaign=campaign1 (Accessed 01 November 2025)
- Clark, R.W., Threton, M.D. and Ewing, J.C.** (2010). The Potential of Experiential Learning Models and Practices In Career and Technical Education & Career and Technical Teacher Education. *Journal of Career and Technical Education*, 25(2). Available at: <https://files.eric.ed.gov/fulltext/EJ931098.pdf> (Accessed 01 November 2025)
- Rodriguez-Segura, D.** (2021). EdTech in Developing Countries: A Review of the Evidence. *The World Bank Research Observer*, 37(2). doi:<https://doi.org/10.1093/wbro/lkab011> (Accessed 01 November 2025).
- Tsymbol, L. & Kalenyuk, I.** (2023). Digital Transformation of The Global Education market. *Baltic Journal of Economic Studies*, 9(5). doi:<https://doi.org/10.30525/2256-0742/2023-9-5-266-274> (Accessed 01 November 2025).
- Valbona, M., Msc, B. and Belshi, M.** (2017). Modern Teaching Versus Traditional Teaching- Albanian Teachers Between Challenges and Choices. *European Journal of Multidisciplinary Studies*, 2(4). Available at: https://revistia.com/files/articles/ejms_v2_i4_17/Valbona.pdf (Accessed 01 November 2025).
- Volkov, A., & Konanchuk, D.** (2014), “Greenfield Era in Education”, SKOLKOVO Education Development Centre (SEDeC)

https://iite.unesco.org/files/news/639201/Greenfield_in_Education_ENG.PDF (Accessed 01 November 2025).

REFERENCE LIST

- Clark, R.W., Threton, M.D. and Ewing, J.C.** (2010). The Potential of Experiential Learning Models and Practices In Career and Technical Education & Career and Technical Teacher Education. *Journal of Career and Technical Education*, 25(2). Available at: <https://files.eric.ed.gov/fulltext/EJ931098.pdf> (Accessed 01 November 2025).
- Lysenko, A.** (2024). Kak vnedrit' tekhpred v universitete v 2024 godu: 10 slagaemykh uspekha. Available at: https://tech-innovations.ru/kak-vnedrit-tekhpred-v-universitete-v-2024-godu-10-slagaemyh-uspekha?utm_source=email&utm_medium=campaign1&utm_campaign=campaign1 (Accessed 01 November 2025).
- Rodriguez-Segura, D.** (2021). EdTech in Developing Countries: A Review of the Evidence. *The World Bank Research Observer*, 37(2). doi:<https://doi.org/10.1093/wbro/lkab011> (Accessed 01 November 2025).
- Tsymbal, L. & Kalenyuk, I.** (2023). Digital Transformation of The Global Education market. *Baltic Journal of Economic Studies*, 9(5). doi:<https://doi.org/10.30525/2256-0742/2023-9-5-266-274> (Accessed 01 November 2025).
- Valbona, M., Msc, B. and Belshi, M.** (2017). Modern Teaching Versus Traditional Teaching- Albanian Teachers Between Challenges and Choices. *European Journal of Multidisciplinary Studies*, 2(4). Available at: https://revistia.com/files/articles/ejms_v2_i4_17/Valbona.pdf (Accessed 01 November 2025).
- Volkov, A., & Konanchuk, D.** (2014), "Greenfield Era in Education", SKOLKOVO Education Development Centre (SEDeC) https://iite.unesco.org/files/news/639201/Greenfield_in_Education_ENG.PDF (Accessed 01 November 2025).

РЕЗЮМЕ

ПРАКТИЧЕСКАЯ НАПРАВЛЕННОСТЬ ПРЕПОДАВАНИЯ ТЕХНИЧЕСКИХ ДИСЦИПЛИН

Асмик Айвазян

Современные технологические достижения и меняющиеся требования рынка труда требуют внедрения инновационных подходов к технологическому образованию, особенно в развивающихся странах. Традиционные, теоретически ориентированные методы преподавания становятся всё менее эффективными для формирования у студентов практических навыков, необходимых в XXI веке. В данной статье рассматриваются проблемы существующих образовательных моделей и предлагается проектно-ориентированное обучение как стартап-подобная модель. Рассматривая учебную аудиторию как пространство для инноваций, где студенты активно решают реальные задачи, данный подход соединяет образование с потребностями индустрии и способствует формированию творческих и самостоятельных специалистов.

Ключевые слова: проектное обучение, образовательные вызовы, технические дисциплины, образовательные технологии.

SUMMARY

PRACTICAL ORIENTATION OF TECHNICAL SUBJECT TEACHING

Hasmik Ayvazyan

Modern technological advancements and evolving labor market demands require innovative approaches to technological education, particularly in developing countries. Traditional, theory-centered teaching methods are increasingly ineffective in equipping students with practical, 21st-century skills. This paper highlights the challenges of current educational models and proposes project-based learning as a startup-inspired framework. By treating the classroom as an innovation space where students actively solve real-world problems, this model bridges education with industry needs and fosters the development of creative, independent professionals.

Key words: Project-Based Learning, Educational Challenges, Technical Subjects, Educational Technologies.

Հոդվածը ստացվել է՝ 25.10. 2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 29.10. 2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 04.11.2025



Գրեցված 1922

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ Х. АБОВЯНА
ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER KH. ABOVIAN

<http://scientificnews.aspu.am/>